

ԱՅՍ ԹԻՒՈՎ

Գանատայի վարչապետ Ճասթին Թրուսո պիտի մասնակցի Հայաստանի մէջ կայանալիք Ֆրանսախօս երկիրներու համաժողովին, էջ 3

Ազգային-Կուսակցական Գործիչ Յակոբ Եսփուճեան Իր Մահկանացուն Կնքեց, էջ 3

Ի՞նչ Փոխեց Անցնող Տարին Ջաւախքի Մէջ, էջ 4

Տանկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - Դ., էջ 6

ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ ԴՈՎՏՈՐ ՎԻԳԷՆ ԵԱԳՈՒՊ-ԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ՀՅԴ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ, էջ 8

Գանատայի Հայ Դատի յանձնախումբը մասնակցեցաւ Պրիթիշ Գոլոմպիայի Ազատականներու համաժողովին

Արեւմտեան Գանատայի Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութիւնը, Փետրուար 3-ին մասնակցեցաւ Վանգուվերի մէջ կայացած Պրիթիշ Գոլոմպիայի նախագի Ազատական կուսակցութեան համաժողովին, որուն ընթացքին կուսակցութեան պատգամաւորները կուսակցութեան նախագահ ընտրեցին Պրիթիշ Գոլոմպիայի խորհրդարանի անդամ Անտրու Ուիլքընսընը:

Նշենք, որ Պրիթիշ Գոլոմպիայի խորհրդարանի 86 անդամներէն 41-ը ազատականներ են եւ ուժեղ ընդդիմութիւն են ներկայ կառավարութեան մէջ: Հայ Դատի Արեւմտեան շրջանի ընկերները շնորհաւորեցին նորընտիր ղեկավարը:



ՀՅԴ Բիւրոյի Եւ Գերագոյն Մարմնի Համատեղ Նիստի Յայտարարութիւնը

2018թ. Փետրուարի 1ին տեղի ունեցաւ ՀՅԴ Բիւրոյի եւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի հերթական՝ արդէն երրորդ ընդլայնուած նիստը: Օրակարգի գլխաւոր թեման քաղաքական կողմից շուրջ մէկամեայ գործունէութիւնն էր: Ներկայացուած գեղեցիկների եւ քննարկման արդիւնքում կատարուեցին հետեւեալ հաստատումները.

1. Անցումը խորհրդարանական կառավարման նոր սկզբի, երկրի առաջընթաց գարգացման խոչընդոտները յաղթահարելու հնարաւորութիւն է՝ առանց գիջիւղ մեր ազգային-պետական ռազմավարական շահերը: Համակարգային, որակական բարեփոխումները խորացնելու, անշրջելի դարձնելու անհրաժեշտ նախապայմաններ են ստեղծուած:

2. Կոալիցիոն կառավարութիւնը, իր ծրագրին համապատասխան, առաջնորդում է Դանակցութեան պաշտպանած՝ «զարգանալ՝ չգիջիւղ» գծուարին, բայց արժանապատիւ սկզբունքով:

3. Սահմանադրական օրէնքների ընդունմամբ, օրէնսդրական նոր կարգաւորումներով ձեւաւորուել են խորհրդարանական կառավարման անհրաժեշտ հիմքերը:

4. ԵՄ հետ համապարփակ եւ ընդլայնուած համաձայնագրի կնքմամբ ստեղծուած է խորհրդարանական համակարգի առաջագիւղ փորձը տեղայնացնելու անհրաժեշտ միջավայր:

5. Արդարադատութիւն երաշխաւորող դատական անկախ համակարգի ձեւաւորման գործընթաց է սկսուել:

6. Օրէնսդրութեան հակադրուպիոն անկախ ինստիտուցիոնալ համակարգ է ձեւաւորուում, որի գործունէութիւնը, ակնկալում ենք, վստահութիւն կը ներշնչի ոչ միայն հանրութեանը, այլեւ անտեսաւարողներին ու ներդրողներին:

7. Պաշտպանութեան ոլորտում ընթացքի մէջ են «Ազգ-բանակ» հայեցակարգի ամբողջացմանը, ռազմաարդիւնաբերական համալիրի կայացմանն ու սահմանների անձեռնմխելիութեանն ուղղուած՝ իրենց ծաւալով եւ խորութեամբ աննախադէպ բարեփոխումները:

8. ԵՄ եւ ԵԱՏՄ հետ միաժամանակեայ եւ փոխշահաւէտ գործընկերային յարաբերութիւնների համադրմամբ՝ ստեղծուել է երկրի միջազգային հեղինակութեան բարձրացման եւ բազմակողմ, փոխընդհանուր արտաքին քաղաքականութիւն իրականացնելու անհրաժեշտ միջավայր:

9. Վերջին տարիների համեմատ արձանագրուել է աննախադէպ անտեսական աճ, կտրուկ աւելացել է արտահանման ծաւալը, հակաճորէն բարելաւուել է հարկային եւ մաքսային վարչարարութիւնը, գերակատարուել է 2017թ. բիւջէն, ընթացքի մէջ են մի շարք ներդրումային ծրագրեր, մարզերում անտեսական աշխուժութեան նշաններ կան:

Անշուշտ, աննախադէպ ծաւալ եւ խորութիւն ունեցող փոփոխութիւնները միանգամից չեն կարող արդիւնաւորուել: Առաջնահերթ խնդիր է երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական կեանքը լիարժեք օրէն համապատասխանեցնել նոր սահմանադրական կարգին՝ ազատուելով նախորդ համակարգի ձեւաւորած կարծրատիպերից եւ հաստատել նոր համակարգից բխող ներիշխանական յարաբերութիւններ: Հանրային վստահութիւնը սկիզբ առած բարեփոխումների նկատմամբ օրէնցօր աւելացնելու համար չպէտք է տպաւորութիւն թողնել, որ Սահմանադրական կարգը փոխուել է, բայց կառավարման գործելաոճը, անտեսական եւ սոցիալական կարգերը մնացել

ՀՅԴ... Ծար. էջ 3



Komitas.ca
FUNERAL COMPLEX

Always standing by our community

PRE-PLANNING WITH 0% INTEREST
1, 3, 5 OR 10 YEAR PAYMENT PLANS

5180 Salaberry, Montreal, QC H4J 1J3
T 514.331.0400



2018 HONDA PILOT MSRP STARTING FROM \$40,390*


HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com

Kevoak Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian

HONDA

Les saveurs de la méditerranannée...
le bon goût du partage !



Suivez-nous !



www.groupeadonis.ca



MARCHÉ

ADONIS

Գանատայի վարչապետ Մաթիո Թրուսո պիտի մասնակցի Հայաստանի մէջ կայանալիք Ֆրանսախօս երկիրներու համաժողովին

Հայաստանի Հանրապետութեան Օթթառուայի դեսպանատունը ֆէյսպուքի իր կայքէջով յղած տեսանկյունով կը տեղեկացնէ, թէ Գանատայի վարչապետ Մաթիո Թրուսո յառաջիկայ հոկտեմբերին պիտի այցելէ Հայաստան եւ մասնակցի համաշխարհային ֆրանսախօս երկիրներու խորհրդաժողովին (the International Organization of the Francophonie);

Աւելի քան 50 երկիրներ անդամ են ֆրանսախօս երկիրներու միջազգային կազմակերպութեան: Հայաստան անդամակցած է 2002-ին:

Երկու ուսանողներ կ'արժանանան ՀՕՄ-ի «Լէյլէկեան» կրթաթոշակի նպաստին

Հայ Օգնութեան Միութիւնը անբակտիւրէն կ'ապուծ է մեր ազգի գոյութեան հետ. առ այդ ՀՕՄ-ի Մոնթրէլի «Սօսէ» մասնաճիւղի վարչութիւնը առիթը ընծայեց երկու ուսանողներու՝ Կարօ Շանթ Թորոնթոնի եւ Մարիա Դանիէլեանի, օգտուելու 2017-2018 տարեշրջանի «Տորոնթի Լէյլէկեան» կրթաթոշակի նպաստին:

Այս գումարը նիւթական օգնութիւն ըլլալէ աւելի բարոյական ներդրում կը համարուի, որովհետեւ կը ծառայէ Հայ երիտասարդին գիտականօրէն զարգացման եւ անոր ուսման յարատեւման:

Այս առիթը «Սօսէ» մասնաճիւղի վարչութիւնը ի խորից սրտի կը շնորհակալ ընտրեալ ուսանողները, մաղթելով անոնց յարատեւ վերելք: Ինչպէս նաեւ շնորհակալական խօսք կ'ուղղէ ընկ՝ Տորոնթի Լէյլէկեանին՝ անոր տրամադրած նիւթական օժանդակութեան եւ քաջալերանքին համար՝ միշտ գորավիզ կանգնելու Հայ ուսանողին ու անոր ուսումնական ճգնաժամներուն:

ՀՅԴ... Սկիզբը էջ 1

են նոյնը: Քաղաքական կոալիցիան պարտաւոր է վեր հանել առարկայական ու ենթակայական բոլոր խոչընդոտներն ու խնդիրները, որոնք թոյլ չեն տալիս անհրաժեշտ թափը հաղորդել երկրի զարգացմանը եւ սոցիալական արդարութեան միջավայր ստեղծել: Հարկ է արձանագրել, որ բարեփոխումների հանդէպ դեռեւս հանրային անվստահութիւնը յաղթահարուած չէ, եւ երկրի զարգացման տեմպերը մեզ չեն բաւարարում:

Այս առումով անհրաժեշտ է՝

1. Հասարակութեան մէջ պետութեան եւ ապագայի հանդէպ վստահութիւն ու լաւատեսութիւն ձեւաւորելու նպատակով՝ գործադրել շահերի բախման դէպքերը բացայայտելու ու կանխելու, անօրինական գործունէութեան համար անխուսափելիօրէն պատասխանատուութեան ենթարկելու, բիզնեսն ու հանրային իշխանութիւնը տարանջատելու ամբողջական համակարգ:

2. Վարել բարձր որակաւորում ունեցող, մրցունակ ու վստահելի մարդկային կապիտալ ձեւաւորելու ուղղուած արդար ու թափանցիկ կարգային քաղաքականութիւն:

3. Կառավարութեան կառուցուածքի եւ գործունէութեան, պետական կառավարման համակարգի մարմինների մասին օրէնքներով ապահովել կառավարութեան, վարչապետի եւ նախարարների սահմանադրութեամբ նախատեսուած կարգավիճակներին համապատասխան լիազօրութիւնների եւ պարտականութիւնների տարանջատումն ու պատշաճ կարգաւորումը: Յետագայում անդրադառնալ կառավարութեան կառուցուածքն էականօրէն օպտիմալացնելու խնդրին:

4. Ընտրական օրէնագրքում վերանայել գործող տարածքային ռեյտինգային ընտրակարգը, խոչընդոտուած համայնքներում ներդնել համայնքի ղեկավարի անուղղակի ընտրութեան մոդելը

Ազգային-Կուսակցական Գործիչ Յակոբ Եափուճեան Իր Մահկանացուն Կնքեց

Շաբաթ, 3 փետրուարին իր մահկանացուն կնքեց ազգային-կուսակցական գործիչ Յակոբ Եափուճեան:



Յակոբ Եափուճեան ծնած է 24 ապրիլ 1945-ին, Պէյրութի մէջ: Շրջանաւարտ է Համագրայինի «Նշան Փալանճեան» ձեւարանէն: Աւարտած է Սեն ժոզեֆ համալսարանի հաշուապահութիւն-տնտեսութիւն բաժինը: ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միութեան հիմնադիր Կեդրոնական վարչութեան անդամ եղած է: ՀՅԴ «Աղբալեան» կոմիտէի անդամ եղած է: Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն եղած է ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ: Ան երկար տարիներ եղած է նաեւ ՀՅԴ Բիւրոյի հաշուապահական-տնտեսական հարցերու խորհրդատու:

Համագրային հայ կրթական եւ մշակութային միութեան մէջ իր գործունէութիւնը եւս բեղուն եղած է: Համագրայինի հաւատաւոր անդամներէն եղած է՝ իր ազգային գործունէութեան ամբողջ շրջանին: Յակոբ Եափուճեան Համագրայինի Կեդրոնական վարչութեան անդամ նշանակուած է (նշանակով շրջանին), մասնակից՝ Համագրայինի նոր կազմակերպական ձեւի մշակումի աշխատանքներուն, ինչպէս նաեւ մասնակից՝ բոլոր պատգամաւորական ժողովներուն: Երկու յաջորդական շրջան վարած է Համագրայինի Կեդրոնական վարչութեան ատենապետի պաշտօնը: Ան 3 յաջորդական շրջաններ եղած է Համագրայինի Հիմնադրամներու կառույցի մարմինի ատենապետ:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային կեդրոնական վարչութեան երկար տարիներու անդամ եղած է:

եւ աւագանիների ձեւաւորման համամասնական ընտրակարգ:

5. Յստակեցնել Հայաստանի տնտեսական կարգի սահմանադրական հիմք հանդիսացող սոցիալական-չուկայական տնտեսութեան մոդելը՝ նպատակ ունենալով մեղմել սոցիալական բեւեռացումը, խթանել աշխատատեղերի ստեղծումը, ձեւաւորել բազմակենտրոն տնտեսական զարգացման օջախներ:

6. Անհրաժեշտ է ամէնօրեայ աշխատանք կառավարութեան ծրագրում ամրագրուած նպատակների կենսագործման ուղղութեամբ՝ աղքատութեան 12 տոկոսով նուազեցում, անուանական նուազագոյն աշխատավարձի 25 տոկոս աճ, ժողովրդագրական իրավիճակի արմատական բարելաւում, սոցիալապէս անապահով ընտանիքների համար ինքնուրոյն բար կայուն եկամտի ձեւաւորում, պարէնային ինքնաբաւութեան մինչեւ 75 տոկոսի ապահովում:

7. Անհրաժեշտ է գործնական քայլերով թոյլ չտալ, որ ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցողները հակամրցակցային համաձայնութիւններով միասնական գնային քաղաքականութիւն թելադրեն:

8. Վերանայել իրականացուող սոցիալական քաղաքականութիւնը՝ նպատակ ունենալով քաղաքացիների կենսապահովման նուազագոյն պայմանների ապահովումը եւ գնաճի ազդեցութեան մեղմումը:

9. Ձեւաւորել պետական ռազմավարական անհրաժեշտ պաշարներ քաղաքացիներին աղէտներից եւ սոցիալ-տնտեսական ռիսկերից ապահովագրելու համար:

10. Հասնել Հայաստանի, Արցախի եւ Սիւրիոյի, որպէս մէկ միասնական հայութեան ամբողջացման՝ հայութեան ճակատագրում բոլոր հայերի մասնակցութիւնն ապահովող համապատասխան իրաւաքաղաքական միջավայրի ստեղծմանը:

CIBC Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com

Groupe Sutton - Performer Inc. 123 Place Frontenac Pointe-Claire, QC H9R 4Z7 ALBERT ARKILANIAN Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilianian@sutton.com Cell: 514.962.8822

NISSAN GABRIEL VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS HONDA GABRIEL Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca

École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel: (514) 963 3363

BRING YOUR OWN WINE NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

ՀԱՅԿ ԳԱՐՈՒՆԵԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000

NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Ի՞նչ Փոխեց Անցնող Տարին Զաւախքի Մէջ

«Սամցիւէ-Զաւախքի մեղիա վերլուծական կենտրոն»-ը ղեկավարներ 28 թուակիր հաղորդագրութեամբ մը կը ներկայացնէ 2017 տարուան հաշուեկշիռը՝ հայկական տեսանկիւնէն, զոր կը ներկայացնենք ստորեւ:

Մի քանի օրից բոլորս միասին թեւակոխում ենք նոր՝ 2018 թուական: Անցնող տարում մենք արձանագրեցինք, ինչպէս դրական, այնպէս էլ բացասական բազմաթիւ երեւոյթներ: Ունեցանք ձեռքբերումներ ու պարտադրուած նահանջի պահեր: Անկոտորում պահեցինք մեր ոգին՝ արդարութեան հաստատման ճգնաժամին մէջ:

Միասնական ջանքերով ձգտեցինք դարձնել մեր շրջանը աւելի ապահով, բարեկեցիկ եւ ուժեղ, որտեղ քաղաքակիրթ երկրի շրջանին վայել կը յարգուեն մարդու բոլոր իրաւունքները: Մեր բոլորի համոզմունքն ու երազանքը անցնող տարում եւս անփոփոխ էր՝ կառուցել զարգացող ժողովրդավարական երկիր, հզօր տնտեսութեամբ ու օրէնքի գերակայութեամբ, որտեղ կը յարգուեն երկրի ազգային ու կրօնական փոքրամասնութիւնների բոլոր իրաւունքները:

Անցնող տարուայ դրական ձեռքբերումներից կարելի է առանձնացնել Վրաստանում նոր սահմանադրութեան մէջ երկքաղաքացիութեան մասով փոփոխութիւնը: Շնորհիւ երկրի իշխանութիւնների խոհանք քաղաքականութեան՝ այդ խնդիրը մէկընդմիջ լուծուած կարելի է համարել, եթէ ի հարկէ քաղաքացիութիւն կորցրած անձինք հեշտութեամբ կարողանան վերականգնել իրենց նախկին քաղաքացիութիւնը: Դա Վրաստանում անկասկած կ'ուրախացնէր քաղաքացիութեամբ կիսուած բազմաթիւ ընտանիքներին: Ձեռքբերումների մէջ ինչպէ՞օ չնկատենք նաեւ վարչապետ Կիրիլի Քվիրիքաշվիլիի վերջերս արած յայտարարութիւնը, ըստ որի, Վրաստանը գուեցէրիական SGS ընկերութեան հետ պայմանագիր է ստորագրել, որի համաձայն, Վերին Լարսում անբարենպաստ պայմանների դէպքում Հայաստանը Վրաստանից դէպի Ռուսաստան հաղորդակցութիւնը կարող է իրականացնել ինքնահոգակ Հարաւային Օսեթիայի եւ Աբխազիայի տարածքով:

Տուեալ խնդրի մասին խօսուած էր քսան տարուց աւել, ինչը կարծես անիրականաւոր էր թուում շատերին:

Դրական ձեռքբերումների մէջ կարելի է նաեւ շեշտել մեր եւ սփիւռքի կազմակերպութիւնների միջեւ կապերի սերտացումը եւ հայկական սփիւռքի կողմից Զաւախքի խնդիրների հանդէպ ուղարկութեան զգալի աւելացումը, չնայած որ այդ ասպարէզում դեռ կան հակադաս անելիքներ:

Ցաւօք, անցնող տարում մենք բոլորս միասին արձանագրեցինք նաեւ բացասական երեւոյթներ, որոնք յատկապէս կապուած էին որոշ «վիճելի» համարուող եկեղեցիների շուրջ ստեղծուած բարդ իրավիճակով: Նման հարցերում մեր գիշտական մօտեցումը պէտք է լուրջ վերանայման ենթարկուի, եւ դա պէտք է տեղի ունենայ հասարակութեան ներգրաւման միջոցով: Բացասական երեւոյթների շարքին պէտք է դասենք նաեւ թուրքական գործոնի էլ աւելի հզօրացման փաստը Սամցիւէ-Զաւախք տարածաշրջանում, որին հակադրելու համար հայկական ու վրացական կողմերը ոչինչ չեն ձեռնարկել: Այդ մասին բազմիցս անդրադարձել ենք մեր լրատուամիջոցներում:

Նաեւ հարկ է նշել, որ անցնող տարում, ինչպէս եւ՝ նախորդներում, հայ ազգաբնակչութեան ներկայացուցիչներին քանակը չէ աւելացել տեղական ինքնակառավարման մարմիններում, որը երկու հասարակութիւնների համարկման համար լուրջ խոչընդոտներ է ստեղծում: Օրինակի համար, Սամցիւէ-Զաւախքի նահանգապետարանում մինչեւ հիմա աշխատանքի չէ ներկայացուած ոչ մի հայազգի ներկայացուցիչ, չնայած որ Զաւախքում հայերը կազմում են բնակչութեան մեծամասնութիւն: Գրեթէ նման իրավիճակ է նաեւ Ախալցխայի քաղաքապետարանում, որտեղ ազգային փոքրամասնութիւնների ներկայացուածութեան աստիճանը չափազանց փոքր է եւ բացարձակ չի համապատասխանում շրջանի ցեղային նկարագրին:

Այս եւ այլ տեսակի դեռեւս չլուծուած խնդիրների հետ միասին պէտք է փաստենք, որ Վրաստանը վստահ քայլերով շարժուած է դէպի Եւրոպա, յանուն ինչի մեծ փոփոխութիւններ է իրականացնում երկրի ներսում, որը անկասկած լաւատեսութիւն է ներշնչում երկրի ապագայի նկատմամբ:

Զաւախքի Ռազմավարական Նշանակութիւնը Այսօր

Կովկասեան տարածաշրջանին մէջ մեծապետական ուժերու վերադասաւորումը ցոյց կու տայ այսօր, որ Հայաստանի քաղաքականութիւնը պիտի ընթանայ Ռուսիոյ հետ յարաճուն սերտակցութեան հանգրուաններով, մինչ Վրաստան պիտի գործէ Եւրոպայի եւ ընդհանրապէս Արեւմուտքի շահերուն խարխիս հայթայթելու եւ այդ ճանապարհով Արեւմուտքի աւագանին մաս դառնալու դիտաւորութիւններով:

Այսուհանդերձ, ներկայ դրութեամբ, իրականութիւն է նաեւ այն, որ Հայաստանը սերտ առնչութիւններով կապուած պիտի ըլլայ Արեւմուտքին, ինչպէս Վրաստանը՝ Ռուսիոյ: Այս տարերային պատկերը կրնայ փոխուիլ միայն այն ատեն, երբ Ռուսիա հրապարակ իջնէ ամբողջ Կովկասը իւրացնելու ուժային քաղաքականութեամբ. բան մը, որ առայժմ հեռու է աշխարհակարգի իրականութիւններէն:

Վրացական գերիշխանութեան մաս կազմող հայկական Զաւախքը բացառիկ կարելիութիւնը ունի այսօր մանելու Եւրոպայի հետ սերտ շփումներու աւագանէն ներս: Հետեւաբար անոր տնտեսական զարգացումը եւ աստիճանական համարկումը Եւրոպայի տնտեսութեան հետ հասարակաց առաւելութիւններ կը ստեղծեն թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Վրաստանի համար: Համատեղ ռազմավարութեամբ, Զաւախքը կրնայ վերածուիլ զարգացման աշխոյժ գօտի մը՝ խթանելով մրցակցային բնական առաւելութիւնները եւ առանց խաթարելու անոր թանկագին կենսոյրտը: Հայաստանի ցամաքային ճանապարհները (Խճուղային եւ երկաթուղային) Զաւախքի եւ Վրաստանի այլ տարածքներու վրայով մինչեւ Սեւ ծով եւ Եւրոպա Հայաստանին կը հայթայթեն իր տնտեսական կենսունակութեան համար անհրաժեշտ կապը Արեւմուտքի հետ: Զաւախքը կրնայ դիւրաւ դառնալ Հայաստանի կենսական կապը Եւրոպայի հետ: Զարգացման այս նոր մայրուղին բնականօրէն կը խթանէ նաեւ հայ-իրանական տնտեսական կապերը եւ կ'ամրապնդէ Հայաստանի դերակատարութիւնը Կովկասի մէջ՝ որպէս համաշխարհային տնտեսական համարկման բանալի գործոն:

Այս առումով, Զաւախքի հայկական նկարագրի պահպանումն ու զարգացումը պէտք է դիտուի որպէս բանալի արժէք թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Վրաստանի կողմէ: Զաւախքի հայեցիութեան հայեցակարգը պէտք է ձեւաւորուի որպէս երկու երկիրները միացնող ազգակ' փոխանակ դիտուելու որպէս շահերու հակադրման կնճիռ: Հայաստան եւ Վրաստան պէտք ունին զիրենք միաւորող գործոնները ամրապնդելու՝ կլելով իրենց իսկ ազգային գերազոյն շահերէն: Հայկական Զաւախքը երկու երկիրները միաւորող ներուժային հարթակն է:

Բնականաբար այս քննարկումէն կարելի չէ դուրս պահել Թուրքիոյ գործոնը: Պատմականօրէն Սեւ ծովու տարածքին ամենալայն մասը բաժնուած է Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ, եւ Թուրքիան միշտ ալ իր հսկողութեան տակ պահած է Պաթմուրը իր շրջակայքով, որ կ'ընդգրկէ նաեւ Զաւախքը: Այս պարագան աւելի եւս շեշտակի բնոյթ ստացաւ Վրաստանի անկախացումով: Արեւմուտքը Թուրքիոյ ապաւինեցաւ Կովկասի այս բանալի հանգոյցը իր ազդեցութեան տակ առնելու գործին համար: Իսկ Պաքու-ձէյհան նաւթամուղն ու նոր շինուող Կարս-Թիֆլիս-Պաքու երկաթուղին Զաւախքը կը վերածեն ռազմավարական կենսական տարածութեան մը՝ Թուրքիոյ եւ Արեւմուտքի շահերուն համար: Այս լոյսին տակ պարզ կը դառնայ, որ Զաւախքը համաշխարհային կարեւորութիւն ներկայացնող օղակ մըն է այսօր Կովկասի մէջ: Եւ այս առումով, եթէ Կովկասի մէջ յարաբերութիւններու սրումը սկսի պայթուելի բնոյթ ստանալ Ռուսիոյ եւ Արեւմուտքի միջեւ, Զաւախքն է, որ առաջին հերթին պիտի իյնայ այդ ջրապտոյտին մէջ: Իսկ եթէ բախման այդպիսի հոլովոյթ մը գերծ մնայ Կովկասը (որ առայժմ հաւանական տարբերակն է), պէտք է ակնկալել, որ Զաւախքի մէջ շահերու աստիճանական հանդիպում տեղի ունենայ թէ՛ մեծապետական եւ թէ՛ շրջանային ուժերու մակարդակին վրայ: Արեւմուտք, Ռուսիա, Թուրքիա, Իրան եւ անշուշտ Հայաստան, Վրաստան եւ Ատրպէյճան երբեմն հակադիր, բայց ընդհանրապէս լրացուցիչ շահերով պիտի գործեն Զաւախքի մէջ: Զաւախքը պիտի ըլլայ Հարաւային Կովկասի քաղաքականութեան բեւեռը: Կարելոր է, որ այս հանգամանքէն առաջին հերթին օգտուողը ըլլայ Զաւախքը՝ Ի՞նչ:

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

Ghadir Meat & Restaurant
T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

ANI BAKERY AND FINE FOODS
OPEN 7 DAYS A WEEK!
WEEKDAYS 9am - 7pm
SATURDAY 6AM - 6 PM
SUNDAY 8AM - 3 PM
LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine
1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5
Tel 416 745 3111
Fax 416 745 9337

ANI Restaurant
905.761.6484
1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0
Annie Varbedian
Sales Representative
Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbedian@hotmail.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source
Andre Ayvazyan HIS B.A.S.
andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)
Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries
2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5
Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

I.D.A.
Part of the **Rx** family of pharmacies.
Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ
Middle Eastern Pizza
Lahmajoun
ARSEN DABBAGHIAN
25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

Հայ կեդրոնի Տարեցներու միութեան 2017 տարեշրջանի Գիթաբարոյական գործունէութեան տեղեկագիր

22 Փետրուար 2017 - 17 Յունուար 2018

Հայ կեդրոնի Տարեցներու միութեան 2017 տարեշրջանի անդամական ընդհանուր ժողովը գումարուեցաւ 2017 Փետրուար 22-ին, որուն ընթացքին ընտրուեցաւ նոր վարչութիւնը բաղկացեալ հետեւեալ անդամներէն. Ամէնճեան Հմայեակ, Գանոնճեան Իտա, Գուլումճեան Անի, Նաճարեան Լեւոն, Նշանեան Արամ, Տէմիրճեան Գէորգ եւ Փիլիկեան Շուշան:

Վարչութիւնը իր առաջին նիստին ընտրեց իր գլխաւորը եւ կատարեց պաշտօններու բաշխումը հետեւեալ ձևով.

Ատենապետ՝ Գուլումճեան Անի

Փոխ ատենապետ՝ Նաճարեան Լեւոն

Ատենադպրուհի՝ Փիլիկեան Շուշան, նաեւ պատասխանատու անդամականի, յանձնարումքի եւ ձեռնարկներու:

Գանձապահ՝ Գանոնճեան Իտա

Հաշուապահ՝ Տէմիրճեան Գէորգ

Գոյքապահ՝ Նշանեան Արամ

Գնումներու պատասխանատու՝ Ամէնճեան Հմայեակ

Վարչութիւնը դրամատան մօտ ստորագրելու իրաւունք տուաւ Նաճարեան Լեւոնի, Նշանեան Արամի եւ Ամէնճեան Հմայեակի:

Հաշուեքննիչներ նշանակուեցան Գարրիէլեան Անահիտ, Ալեքսանեան Լիւսի եւ Մահերեճեան Ալիս:

Վարչութիւնը նշանակեց նաեւ ձեռնարկներու եւ ճաշկերպութիւններու յանձնարումքի անդամներ. Վարդանեան Գարեգին, Մելիքեան Պերճ, Ալեքսանեան Լիւսի, Վարդանեան Մէրի, Մահերեճեան Ալիս, Կարապետեան Վարդուհի, Նաճարեան Սիլվա, Պատմաճեան Սոնա, Նաճարեան Լիւսի, Խորասունճեան Ռոզիլ եւ Քապուս Փօլին:

Կազմուեցաւ նաեւ շաբաթական հաւաքներուն սպասարկութիւնը ճաշերու ցանկը, ինչպէս նաեւ տարեկան ձեռնարկներու եւ զբօսապտոյտներու: Սոյն ցանկը վարչութիւնը պատճենահանելով ցրուեց իր անդամներուն:

Վարչութիւնը յարմար նկատեց հերթական ժողովները գումարել ամսական գումարներով՝ առաջին երեքշաբթիին:

Յարգ գումարած ենք 12 ժողով: Ի հարկին ունեցած ենք նաեւ խորհրդակցական ժողովներ:

Կատարուած աշխատանքներ

Ձեռնարկներու եւ այլ յայտարարութեանց սիրուածները շարունակուեցան ե-նամակներով եւ հեռաձայններով, որոնց շնորհիւ միութիւնը ունեցաւ մեծ թիւով մասնակցողներ եւ նոր անդամներ:

Այս տարեշրջանին ալ երկարատեւ բացականերու եւ ապաքինման մէջ եղող անդամներու յատուկ նամակներ առաքուած են լրիւ ապաքինման մաղթանքներով, թիւով՝ 12 հատ:

Անդամական

Տարեշրջանին սկիզբը միութիւնը կը հաշուէր 220 անդամ: Ունեցանք 18 նորեր, մահացած՝ 8-ը եւ դադարած են 12 անտարբերներ, որով այսօր մեր անդամացանկը ունի 218 անդամ:

Ձեռնարկներ

2017-ին կազմակերպած ենք հետեւեալ ձեռնարկները.

1.- Valentine, 15 Փետրուար. հակառակ անպատ օդին՝ ներկայ եղան 85 անդամներ եւ բարեկամներ: Երգով եւ նուագով ձեռնարկը խանդավառեցին

Յովիկ Պիլէմճեանը եւ Յակոբ Մելքոնեանը:

2.- Bake Sale, 22 Մարտ. անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք, մեծ թիւով անդամներ եւ համակիրներ մասնակցեցան վաճառքին:

3.- Մայրերու օր, 10 Մայիս. ներկայութեամբ Գերաշնորհ Տէր Սուրէն Արք. Գաթարոյեանի եւ մօտ 150 ներկաներու: Ձեռնարկին իր սրտի խօսքը փոխանցեց Սրբազան Հայրը, ամուսնեքեց Լիւսի Ալեքսանեանը՝ նուագակցութեամբ Արա Ալեքսանեանի, իսկ երգերով եւ նուագներով խանդավառեցին ճաշկերպը Արթուր Արքարեանը, Աւօ Նիկողոսեանը եւ Հիւսա Լիպարեանը:

4.- Հայրերու Օր, 21 Յունիս. մասնակցութեամբ 110 անդամներու եւ բարեկամներու, ճաշերը պատրաստուած էին յանձնարումքին ձեռնարկ, անուշեղէնները պատրաստուած եւ նուիրուած՝ Ալիս Մահերեճեանի կողմէ, հանդիսավարներն էին Արա եւ Լիւսի Ալեքսանեանները, երգերով եւ նուագներով ճաշկերպը խանդավառեցին Յովիկ Պիլէմճեանը եւ Յակոբ Մելքոնեանը:

5.- Ճաշկերպ, 27 Սեպտեմբեր. մեզի այցելեցին Յարութ Շիթիլեանը՝ օրին Մոնթրէալի քաղաքապետական ընտրութիւններու թեկնածուն, ինչպէս նաեւ իր գործակից Effie Giannou-ն:

Զբօսապտոյտներ

20 Ապրիլ, Cabane A Sucre, Chalet De Ruisseau. մասնակցութեամբ 40 անդամներու եւ բարեկամներու:

29 Յունիս, St. Anne De Bellevue. մասնակցութեամբ 42 տարեցներու:

20 Յուլիս, Mont tremblant. մասնակցութեամբ 44 տարեցներու:

2 Օգոստոս, Chalet De Ruisseau. մասնակցութեամբ 22 տարեցներու:

28 Նոյեմբեր - 5 Դեկտեմբեր, այցելութիւն Cuba-Varadero-ի Ibero Star Bella Vista-ի ծովափը. մասնակցութեամբ 26 անդամներու եւ բարեկամներու: Տարեցներու միութեան հիմնադրութեան 16 տարիներ ետք, վարչութիւնս առաջին անգամ ըլլալով գաղափարը ունեցաւ եւ յաջողութեամբ իրականացուց յայտարարուածը, արժանանալով մասնակցողներու գնահատանքին եւ քաջալերանքին:

20 Փետրուար, X'Mas Party, Հիւրասիրութիւն-ճաշկերպ. կազմակերպուած Ս. Յակոբ մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէ, առ ի գնահատանք միութեան տարած գործունէութեան, որուն ներկայ եղան թեմիս բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Սրբ. Արք. Չարեան, Հովիւ Տ. Գառնիկ Ա. Քահանայ Գոյունեան, եկեղեցւոյ Հոգաբարձութեան Գրիգոր Տ. Ղուկասեան, Ռաֆֆի Աբանեան, քաղաքապետարանի նախկին գործադիր ատենապետ Յարութ Շիթիլեան եւ Effie Giannou, ինչպէս նաեւ 180 անդամներ եւ բարեկամներ: Այս առթիւ տեղի ունեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր մը, պատրաստութեամբ եւ մասնակցութեամբ Արա Ալեքսանեանի, որուն ընթացքին հանդիսավարուհի Լիւսի Ալեքսանեան արտասանեց «Հայրենիքիս հետ»: ՀՕՄ-ի Ծաղկոցի փոքրերը ելոյթ ունեցան Կաղանդի երգերով: Ճաշկերպը խանդավառեցին Արթուր Արքարեանը, Աւօ Նիկողոսեանը, Հիւսա Լիպարեանը եւ Արա Ալեքսանեանը:

11 Յունուար 2018, Ճաշկերպ-հիւրասիրութիւն. միութեան ձեռնարկներու յանձնարումքի անդամներուն՝ առ ի գնահատանք իրենց մատուցած ծառայութիւններուն:

Գնահատանք

Վարչութիւնս բարձր կը գնահատէ Սիրվարդ Նշանեանի երկար տարիներու ընթացքին միութեան անդամացանկերը վերանայիլն ու դասաւորելը՝ առաւելագոյն բժախնդրութեամբ:

Շնորհակալական

Վարչութիւնս շնորհակալութիւն կը յայտնէ.

- Այն բոլոր հաստատութիւններուն, միութիւններուն, բարեկամներուն եւ անձնաւորութեանց, որոնց քաջալերանքին, նուիրատուութիւններուն եւ աջակցութեան շնորհիւ 2017 տարեշրջանի գործունէութիւնը եղաւ յաջող եւ արդիւնաւէտ:

- Ս. Յակոբ Առաջնորդարանիս Մայր եկեղեցւոյ պատուարժան Հոգաբարձութեան՝ քաջալերանքին, բնօրէն դիւրութիւններուն եւ X'Mas-ի ճաշկերպին համար, ինչպէս նաեւ ՀՅԳ «Միհրան Փափագեան» կոմիտէութեան, որ կը քաջալերէ մեր գործունէութիւնը եւ զօրավիթ կը կանգնի միութեանս:

- «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրական կազմին, որ իր սիւնակներուն մէջ տեղ կու տայ մեր ծանուցումներուն:

- Տէր եւ տիկին Սեւան Ստամպուլեաններուն, որոնք «Toi et Moi Cafe» հաստատութեան սեփականատէրերն են եւ կը սատարեն սուրճի մեր հաւաքոյթներուն:

- «Boulangerie Arka»-ին՝ տիար Հմայեակ Թուֆայանին:

- «Boulangerie Seta»-ին՝ տէր եւ տիկին Վարդան եւ Անի Երեւանեաններուն:

- Տէր եւ տիկին Արա եւ Լիւսի Ալեքսանեաններուն, որոնք սիրալոյսով կը կազմակերպեն մեր ձեռնարկները, գեղարուեստական յայտագիրները եւ կը մասնակցին ամուսնեքով ու նուագով:

- Տիկին Սիրվարդ Նշանեանին, որ սիրալոյսով կը կերպով ամէն տարեշրջանի սկզբնաւորութեան կը պատրաստէ մեր անդամներուն վերանայուած եւ սրբաբարձ անդամացանկը:

- Տիկին Սիլվիա Նաճարեանին, որ սիրալոյսով կը կերպով միութեանս բոլոր ձեռնարկներուն մասին տեղեկութիւնները կը պատրաստէ եւ ե-նամակով կը փոխանցէ:

- Պրն. Յակոբ Ս. Փիլիկեանին, որ նոյնպէս սիրալոյսով կը կերպով կ'օժանդակէ մեր տարեկան տեղեկագրի պատրաստութեան:

- Անուշեղէններու վաճառքին իրենց կամաւոր մասնակցութիւնը բերող բոլոր անդամներուն:

Շնորհակալութիւն նաեւ մեզ քաջալերող բոլոր նուիրատուներուն, անդամներուն, բարեկամներուն եւ յանձնարումքներուն՝ իրենց ցուցաբերած աջակցութեան եւ սիրալոյսով ծառայութեան համար, որոնց շնորհիւ 2017 տարեշրջանը եղաւ բարեկալատ տարի մը:

Վարչութիւնս իր տարեշրջանը աւարտած ըլլալով, այսու կու գայ իր հաւաքական հրաժարականը ներկայացնելու եւ յաջորդ տարեշրջանի վարչութեան կը մաղթէ յաջող գործունէութեամբ լի եւ փայլուն տարեշրջան մը:

Գուլումճեան Անի
Նաճարեան Լեւոն
Փիլիկեան Շուշան
Գանոնճեան Իտա
Տէմիրճեան Գէորգ
Նշանեան Արամ
Ամէնճեան Հմայեակ

Հորիզոն | www.horizonweekly.ca


Voyages HAIG Travel
Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676
ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐՍԳՈՅՆ ԳԻՆԵՐ
PERMIS DE QUÉBEC
3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Videotron: HD616 կամ SD16	Շաբաթ- առաւօտեան ժամը 8:30-ին (առաջին սփռում)
Bell Fibe: HD1216 կամ SD216	Հինգշաբթի- երեկոյեան ժամը 8:30-ին

Ուղիղ արձակում www.icitelevision

Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - Դ.



**Գլուխ Երկրորդ
1914 - Բասէն Եւ Ալաշկերտ
3.**

Ազգային Վարչութիւն

Կամաւորական գունդերուն հետ միաժամանակ երկիրը կը մտնէր ազգային վարչական մեքենան, անյայտ կամ ապօրինի անուան տակ: Հայերու ազգային բաղձանքները գրաւուած պղտիկ գետնի մը վրայ իսկ մարմին եւ ձեւ կ'ուզէին առնել: Կամաւորական շարժումը եւ կատարուած նիւթական ու բարոյական գոհողութիւններն ուղղուած էին երկու նպատակի.- ա) Որքան կարելի է շուտ մտնել հայաշատ նահանգներու ներսը՝ Ֆրիգիքական վտանգէ փրկելու համար այդ տեղի հայերը, եւ բ) Ուղղակի (թէ կարելի է) կամ անուղղակի (եթէ ուսական ձեռքը արգելք հանդիսանայ) միջոցներով ստեղծել ազգային վարչութիւնը եւ երկիրը վերածել հայրենիքի:

Կովկասի հայ մտաւորականութիւնը գինուորական ուժերուն պէս մօթելիզացիայի ենթարկուած էր: Այդ շարժումն կեանքի ընթացքին, գրագէտը, բանաստեղծը, վարժապետը, ուսուցիչն ու աշակերտը գործի լծուած էին: Ոմանք յաջող, ոմանք անյաջող, իրենց օժանդակութիւնը կը բերէին ազատագրական գործին՝ տեղաւորուելով Թիֆլիսէն մինչեւ պատերազմի ճակատը, գինուորական մեքենայի մէջն ու շուրջը:

Զինուորական գործողութիւններէն աւելի նշանակալից է ժողովրդական կազմակերպութեան պատկերը գրաւուած վայրերուն մէջ: Բասէնի եւ Ալաշկերտի գրաւումէն հաջիւ մէկ երկու շաբաթ անց, Ալաշկերտ զրկուեցաւ Ս. Տիգրանեանի գլխավորութեամբ երիտասարդ մտաւորական գործիչներու խումբ մը, որոնցմէ ոմանք տաճկահայեր էին (Աբօյեան, Զաւէն եւ ուրիշներ): Ալաշկերտի վարչութիւնը (այսպէս անուանեց, որովհետեւ մասնաւոր անուն մը չուներ) ե՛ւ օգնութեան մարմին էր, ե՛ւ կառավարչական դեր կը խաղար (անշուշտ քողարկուած կերպով) ե՛ւ տեղաւորման ու հողային բաշխման գործերը կը կարգաւորէր: Ասիկա կառավարական եւ գինուորական նոր առկայծող կեանք մըն էր, որ շատ աննշմար կ'անցնէր ընդհանուր ժխորի մէջ, բայց կենսական ու կազդուրիչ երեւոյթ մը կը մնար:

Օգնութեան մարմինները իրենց առաջին նիւթական օժանդակութիւնը սկսած էին հասցնել, թէեւ թոյլ կերպով, որովհետեւ նոր ազատուած վայրերը եթէ բժշկական սուր կարիք ունէին, սակայն նիւթական տեսակէտով, շատ մտահոգիչ վիճակի մը մէջ չէին: Այդ օրերու մտահոգութիւններն աւելի քաղաքական էին, քան գաղթականական: Տակաւին մենք գաղթական չուներէնք: Երկու շրջաններու կուռի ճակատի վրայ գտնուող շարք մը գիւղերու բնակիչները ետ քաշուած՝ եւ իրենց գրացի գիւղերու մէջ տեղաւորուած էին, որոնց բաւարարելը շատ դժուար էր:

Շատ չանցաւ, երբ նոյեմբերի սկզբին Բասէն զրկուեցաւ մտաւորականներու ուրիշ խումբ մը: Այս խումբը կ'երթար Ազգային Բիւրոյի կողմէ քաղաքական վերաշինական նպատակներով: Խումբը բաղկացած էր վեց հոգիէ, Կորիւն Ղազարեան, Մինաս Մակարեան, Տիգրան Աւետիսեան, Մատուր (բժ. Բ. Բաղդասարեան), Վահան Խուտատեան(4) եւ տղերիս գրողը:

Փակագծի մէջ ըսեմ որ կամաւորական շարժման մասին բաւական թուով երիտասարդ մտաւորականներ (Դաշնակցական) բացասական կարծիք ունէին: Հ.Յ.Դաշնակցութեան 1914-ի աշնան Ռայեօնական ժողովի մէջ, մէկ քանի ընկերներ իրենց բացասական վերաբերմունքը յայտնած էին, սակայն ճնշիչ մեծամասնութիւնը սկսուած կամաւորական շարժումը կազմակերպելու եւ վարելու որոշումը կայացուցած էր: Այսպիսով, մատի վրայ համընդուն անհատներ կային, որոնք տակաւին կը մնային այդ համոզման եւ չէին թափուած գինուորական գործերու մէջ: Ես անձամբ, այդ ընկերներու տեսակէտները կը բաժնէի եւ այդ արամագրութեամբ մեկնած էի Պոլսէն, (յետագային մանրակրկիտ վերագնահատումով եկայ այն եզրակացութեան, որ առջի օրերու մեր խմբակի մտածումը սխալ էր): Հ.Յ.Դաշնակցութեան Բիւ-

րոյի եւ Ազգային Բիւրոյի գիտակցութեամբ, ահա, վեր-յիշուած վեց ընկերներու վրայ ծանրացաւ Բասէնի շրջանի վարչական եւ ժողովրդական միլիցիայի գործերը: Ճիշդ էր ուսական գրաւման հետ միաժամանակ այդ վայրերու համար կը նշանակուէին կառավարիչներ (նաչալնիկ), բայց անոնք շատ անուանական էին: Գործ ունէին իրենց քանի մը ոստիկաններու հետ եւ գլխաւորաբար ելեմուտք ունէին թուրք եւ քիւրդ մնացորդ ազգաբնակչութեան մօտ: Իրական վարչութիւնը, դատ ու դատաստանը, օգնութեան գործը, գինելու եւ գինա-վարժեցնելու աշխատանքը կը տանէին քաղաքական մարմինները Բասէնի եւ Ալաշկերտի մէջ: Այդ երկու խմբերը տեսակ մը Գօլլէկտիւ մարմիններ էին, որոնք աշխատանքի բաժանումով՝ կառավարիչի մը դերը կը խաղային:

Վարչական այդ հաւաքական մարմինը մեր ազգային շրջանակներու մէջ կը կոչուէր «ինքնապաշտպանութեան մարմին», երբեմն «գաղթականական լիազօր», «Ազգային Բիւրոյի Յանձնախումբ»: Սակայն Բասէնի եւ Ալաշկերտի ժողովուրդը մարմինն տուաւ «շտաբ» անունը: Թուսական բանակն ունէր իր շտաբը (սպայակոյտը). հայ ժողովուրդը եկող ուսական իշխանութիւնը մարմնացած տեսաւ անոր ամենագոր շտաբին մէջ: Հայ ազգային իշխանութեանց ներկայացուցիչը կը հանդիսանային այդ մարմինները Բասէնի եւ Ալաշկերտի մէջ, եւ հետեւաբար՝ ժողովուրդը մարմնի մէջ պիտի տեսնէր հայ անգոյ կառավարութեան սպայակոյտը, շտաբը: Անունն այդպէս ալ մնաց:

Պէտք է խոստովանիլ որ այդ անունը շատ յաճախ քաղաքական-գինուորական փորձանքներէ կ'ազատէր մեզ, բայց լուրջ անպատեհութիւններն ալ անպակաս էին: Կամաւորները (երբ կ'ապացուցանէին թէ այսինչ խումբին կը պատկանին) գինուած պատելու իրաւունք ունէին. իսկ ազգաբնակչութիւնը բացարձակապէս այդ իրաւունքէն զրկուած էր: Հայոց շտաբը շրջաններ պտտած ժամանակ՝ գինուած մարդիկ ունէր իրեն հետ: Թուսական բանակի հասարակ գինուորները, երբ այդ երեւոյթի դէմ կը գրգռուէին, անոնց կը հաղորդուէր որ գինուածները հայկական շտաբին կը պատկանին: Այդ գինուորական խօսքը բաւական կ'ըլլար շարք մը արգելքներէ անցնիլ եւ որոշ գործեր կարգաւորել: Բայց շատ անգամ մեզի կը հանդիպէին գիտակից սպաներ, գնդապետներ, զօրավարներ, որոնք նման գինուած փոքրիկ խումբերու եւ քաղաքական անհատներու գոյութիւնը կ'անգիտանային եւ իրենց ստացած լուրերու վրայ, թէ հայկական շտաբ մը գոյութիւն ունի, անմիջական հետապնդման կը ձեռնարկէին մարմնի դէմ: Այդ սպայութիւնը, գինուորական եւ ուսական պետականութեան տեսակէտէն վնասակար կը գտնէր նման մարմիններու գոյութիւնը: Սակայն Բասէն եւ Ալաշկերտ գործող քաղաքական մարմինները գինուած էին շատ խոհեմ վկայականով մը: Անոնք իրենց գտնուած ճակատի ընդհ. հրամանատարէն ունէին պարզ վկայականներ, որոնք կը հաստատէին թէ «անոնք գաղթականական օգնութիւն հասցնելու համար լիազօրուած են եւ կրնան գէնք կրել»: Նոյն թիղթերու մէջ շեշտուած էր յանձնարարութիւն մը, որով կը թիկադրուէր գինուորական եւ քաղաքացիական իշխանութեանց, հարկ եղած պարագաներուն, օժանդակութիւն ցոյց տալ յիշեալներուն: Երբ բարձր սպայութիւնը այդ վկայականները կը կարդար, կը հանդարտէր, մտածելով որ ժողովուրդը «շտաբ» բառը սխալ գործածած է: Բնական է ժողովուրդն այդ բառը սխալ տեղ կը գործածէր, սակայն ատով ան «հայոց իշխանութեան» իմաստը կ'ուզէր բառով մը սահմանագծել: Կարեւորն այն էր թէ այդ անլէկալ մարմիններն ի՞նչքան բովանդակութիւն կրնային դնել իրենց ժողովրդական աշխատանքին մէջ:

Բասէնի մարմինն աւելի լայն ու աւելի հիմնաւոր աշխատանքի մը ձեռնարկեց: Այդ աշխատանքներն առաջին նահանջէն յետոյ միայն իրենց արդիւնքները տուին: Անմիջական աշխատանքի լծուելով՝ ամենէն առաջ գիւղական նոր վարչութիւններ կազմակերպուե-

ցան: Վիճակագրական նոր տախտակներ պատրաստուեցան՝ որով տեղաւորման գործը կը տարուէր որոշ հանձնարումով: Բացի նպատակայարմար բաշխումէն, հնարաւոր էր ջոկել բացարձակ չբաւորներու թիւը՝ անոնց միայն օգնութիւն հասցնելու համար: Ստուգուեցաւ գէնքերու թիւը,- շատ խղճուկ քանակ մը: Գիւղերու մէջ հաստատուեցաւ կապ, որու նպատակն էր շրջանը ամբողջական հաւաքական ապրումներով տողորել: Զեռնարկուեցաւ պրօպագանտի, գիւղական յետամնաց շրջանը քաղաքական եւ ազգային խնդիրներու շուրջ լուսաբանելու համար: Գիւղացիները կը լսէին հաճոյքով. հասարակական կեանքը կը կազմակերպուէր, եւ այդ այն չափով, որքան կարելի էր ակնկալել գիւղական նեղ շրջանէ մը:

Այդ հասարակական աշխատանքներու ընթացքին երկու կարեւոր խնդիրներ ցցուեցան Բասէնի ժողովրդի եւ գայն դեկավարող մարմնի առջև: Առաջին՝ տեղաւորման հարցն էր: Բասէնի շարք մը գիւղերէն հեռացած էին քիւրդերն ու թուրքերը. իսկ կուռի ճակատէն ուսական կողմն անցած էին հայերը: Բասէնի մարմինը ձեռնարկեց հէնց առաջին օրէն հայերը տեղաւորել թափուր մնացած գիւղերու մէջ: Այդպիսով, մենք երկու նպատակի կը հասնէինք՝ առանց մեծ դժուարութիւններու: Նախ՝ գաղթական ժողովուրդ չէինք ունենար, այլ գիւղացին փոխանակ իր գիւղի մէջ բնակուելու, կը բնակուէր Բասէնի մի այլ գիւղի մէջ, եւ յետոյ՝ այդ ձեւով մենք կը հայկականացնէինք ամբողջ Բասէնը: Տեղաւորումը կը նշանակէր հայացնել շրջանը: Այդ մտքով տողորուած էր ամենէն շատ տեղի ազգաբնակչութիւնը(5): Այդ հոգիով վարակուեցան Բասէնի մէջ աշխատող գործիչները, եւ անոնց աշխատանքը դարձաւ ե՛ւ Ազգային Բիւրոյի ե՛ւ Հ.Յ.Դաշնակցութեան ընթացիկ նպատակը: Ասիկա գործուեցութեան նոր եղանակ էր.- Հայաստան ստեղծել:

Երկրորդ կարեւոր խնդիրը ազգաբնակչութիւնը գինելու հարցն էր: Զէնքի ուժը հայերը սկսած էին ըմբռնել: Իրենց շուրջն ու բոլորը կը տեսնէին ուսական բանակը, կամաւորները, միշտ գէնքի ձայն: Իսկ լեռներու վրայ մնացող քիւրդերն ինչպէս երէկ՝ այսօր ալ գինուած կը մնային: Հայ գիւղացիութիւնը գէնք կ'ուզէր, այդ գէնքի ծովուն մէջ: Իր ապահովութիւնը իր սեփական ուժին կ'ուզէր կապել. փոքր ուժ, բայց վերջին հաշուով՝ միակ արժէքաւորը: Այդ աշխատանքին ձեռնարկեց Բասէնի մարմինը գաղտնի ու դժուարին միջոցներով: Ընդամէնը հաջիւ երկու ամսուայ աշխատանք կատարած էր, երբ նահանջի ուրուականը կը ցցուէր մեր դէմ: Գիւղացին իր ապահովութիւնը կը գտնէր միայն հայ կամաւորներու պաշտպանութեան մէջ: Ժողովուրդը տակաւին գինուած ու լաւ կազմակերպուած չէր, որ գոնէ իր անցած ճանապարհներն ապահովէր:

4) 1914-ի դեկտեմբերի 6-ին Գեղարքունիքի Գեղարքունիքի մարզում Կոմիտաս մնացին: Անոնց տեղ մեզի ընկերացան Աշոտ Իսրայելեան եւ Ալեքսանտր Բարխուարեան:

5) Արփաչայը քրդական գիւղ մըն էր, որու բնակիչներու մեծ մասը փախած էր: Հոն տեղաւորած էին հայ գիւղացիներ: Արփաչայի գիւղական մարմինը կազմակերպելու համար այդ տեղ գացած էին Բանի մը ընկերներով: Մեր աշխատանքները վերջացան յետոյ, գիւղի անուր փոխեցին Բանի իր խմբով երբ անցած էր Բասէնի եւ կուռի բռնուած՝ այդ գիւղի ձորին մէջ կոտորուեցաւ, օժանդակութեամբ Արփաչայի քրդերու: Ասիկա արեւմտեան տուրք էր: Յետագային Բանի մը անգամ Գեղարքունիքի տեղի ունեցան, բայց գիւղը մնաց գուտ հայաբնակ եւ Բանի գիւղ: Հիմ քուրդներու տիրապետութեան տակն է եւ դատարկ: Վաղը դարձաւ հայ գիւղացին պիտի կրնայ լեցնել ու շէնցնել Բանի գիւղը:

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ





ANI BAKERY

ԱՆԻ ՓՈՒԴՊԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

Սեփականատր՝ Արսեն Տապալադեան

Ուր կը գտնէք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝, միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով

**Փորձեցէք եւ
գոհ պիտի մնաք**



NEW ADDRESS FROM JANUARY 2016

Ani Bakery Ltd 25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրէ ետք՝ ժամը 2:00
(Երկուշաբթի փակ)

Կազմակերպութեամբ
ՀՅԴ ԳԵՄ « ԼԵՆԻՆ ՇԱՆԹ » եւ « ԲԵԿՈՐ ԱՂՈՒՄ » եւ
ՀՅԴ ԳՊՄ « ԴՐՕ » եւ « ԳԵՄԱՂԷՆ » մասնաճիւղերուն

Փետրուարեան Ապստամբութեան եւ Արցախեան Շարժման նուիրուած

Ազգային, Ազատագրական եւ
Յեղափոխական երգերու փառատօն



Երեկոն
Կը խանդավառէ
Սերոբ Յակոբեան



Շաբաթ, 24 Փետրուար, 2018
Երեկոյեան ժամը 9:00-ին
Մոնթրէալի Հայ Կեդրոնի
Հ.Մ.Ը.Մ.-Կամք մարզասրահէն ներս

ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ 25\$

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել՝
Դրօ Պաշլըքեան (514) 262-8019
Սերժ Քամանեան (514) 947-1890



Հովանաորութեամբ՝ Գերազանի Տ. Բարզևի Արք. Չարեանի
Առաջնորդ Գանուտայի Հայոց Թեմի

Կազմակերպութեամբ՝ Ազգային Առաջնորդարանին



ՇՐՋԱՊՏՈՅՑ

ԵՐԵՒԱՆ - ԱՐՅԱՆ - ՋԱԻԱՆՔ
24 Մայիս - 6 Յունիս 2018



Հայաստանի Հանրապետության
100-ամեակին առիթով

Մասնակցության սակ՝ \$4,150 (15 Մարտի 2018-ին Լոս Անջելեսից կը բարձրանայ 10%)
Մանրամասնություններու համար հեռաձայնել
Առաջնորդարան 514-856-1200 թիվին
prelacy@armenianprelacy.ca



AETERNA

Complexe funéraire • Crématorium
Funeral Complex • Crematorium

**Bienvenue à la
communauté arménienne**

- Cérémonie complète personnalisée
- Confort pour toute la famille
- 130 places de stationnement
- Magnifique endroit au design moderne

**Welcome to the
Armenian community**

- Complete, customized ceremony
- Comfort for the whole family
- 130 parking spaces
- Magnificent, modernly-designed location

ComplexeAeterna.com
55, rue Gince Montréal (Québec) H4N 1J7
514 228-1888 | 1 877 299-1889

POUR UNE CÉRÉMONIE CONTEMPORAINE

Nouvelle alternative dans
le domaine funéraire

**FOR A CONTEMPORARY
CEREMONY**

New alternative in
funeral services





**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի ն մինչեւ ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝
արեան բարակութեան (INR), շնչերակային
ճնշման (tension artérielle), արեան շաքարի
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի
(cholesterol), եւն.

Manoir Gouin
Résidence pour
aînés autonomes
et semi-autonomes

Résidence
Certifiée

À partir de **995\$** (régimes)
Tous les repas, collations et supervision
médicale inclus
1½ à 4½

Gicleurs automatiques
dans chaque appartement

Մենք հոս ուրախ ենք
Պրն. Իրենան

1er mois gratuit pour tout bail signé avant le 28 février 2018

ՊԵՏԱՐԱԳ ՏԵՌԻ ԿՊՈՒՆԵԱՎ
ՍԵՐ ՀԱՅԳԱՏԵԱՆ ՏՈՒՆԵՆ ԱՆԻՍ:

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

ԴԿՏՆԱՆԻ ՎԵՐԱԿՈՒՄԵ ԿԵՂԵՄԻ

Հովանավորութեամբ՝
Հ.Յ.Դ. Պատանոցի Կեդրոնական Կոմիտեի
Հ.Օ.Մ.-ի Պատանոցի Երջանային Վարչութեան
Հ.Յ.Դ. Պատանոցի Երիտասարդական Միութեան Կեդրոնական Վարչութեան
Կազմակերպութեամբ՝
Հ.Յ.Դ. Պատանոցի Կեդրոնական Կոմիտեի «Լոռի-Զատախ» Ցանկմատարներին

**ԶՕՐԱԿՑԱԿԱՆ
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**
ի նպաստ
ԼՈՐԻ ԵՆ ԶԱԿԱՆՔԻ ԵՐԶԱՆՆԵՐՈՒՆ

ԹՈՐՈՆԹՕ
Շաբաթ 17 Մարտ 2018-ի
երեկոյան ժամը 8-ին
Հայ Կեդրոնի Սրահին սեջ
45 Halton Place, Toronto
Տոմսերու համար դիմել
Հոսի Նաճարեանին
416-498-6941

Մուտքի նուէր \$25
Հայ Դատի տուրքը ներառեալ

ՄՈՆՏՐԵԱԼ
Կիրակի 18 Մարտ 2018-ի
երեկոյան ժամը 6-ին
«Բաստրամեան» Սրահին սեջ
3400 Rue Nadon, Montreal
Տոմսերու համար դիմել
Մարտ Ֆրունճեանին
514-748-7137

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
Մասնակցութեամբ՝ արյուած երգիչ
Մկրտիչ Մկրտչեանի (Մակիչ)
Յատկապէս հրաւիրուած Հայաստանէն

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ Ցանկալի հաւասարութիւնը

Երբ կը զարմանանք ի տես աշխարհի վրայ տիրող անհավասարութեան ու կը դատապարտենք անոր ամենէն ծայրայեղ երեւոյթները, հարց կու տա՞նք մենք մեզի, թէ ի՞նչ պիտի ուզէինք, որ ըլլար փոխարէնը, ի՞նչ բաներ փոխուած պիտի ուզէինք տեսնել, ինչի՞ մէջ պիտի կայանար «հաւասարութիւն»-ը կամ իսկակա՞ն հաւասարութիւնը:

Յստակ է, որ ի հնուց աստի գոյութիւն ունին եւ դեռ պիտի ունենան մարդկային էութեան ու բնաւորութեան նսեմ գիծեր, որոնք դիմադրած են ու կը դիմադրեն ամեն բարեփոխումի, բոլոր վսեմացման փորձերուն, ըլլան ատոնք հնագոյն հաւատալիքներու, կրօններու, իմաստասիրութեան թէ կրթութեան ճամբով: Կրթութեան ճամբով մէջ այդ գիծերը կը նուազին, կը մեղմանան, նոյնիսկ կ'անհետանան, բայց չկրթուողներուն, անուղղաներուն մէջ ատոնք կը յամենան ու աւեր կը գործեն ըլլա՞յ անհասակա՞ն, ըլլա՞յ հաւաքական կեանքին մէջ:

Ի՞նչ գիծերու մասին է խօսքը: Կայ տիրելու տենչը: Սա գուցէ վերապրումի բնագոյն մնացուկն է, երբ տակաւին ասունի ու անասունի միջեւ տարբերող փուլին մէջ գտնուող կենդանին պիտի ջանար իր ուժին շնորհիւ տիրանալ կերին, տարածքին, էգիւն... շարունակել կարենալու համար սերնդագործել ու «դեռ շատանալ»: Այդ տենչը, քաղաքակրթութեան զարգացման հետ, մէկ կողմէ պիտի վերածուէր իրերօղնութեան, ընկերութեան կազմակերպումի ու բարեսիրական գործունէութեան, միւս կողմէ պիտի հասնէր նմանին վրայ բռնանալէն, ուրիշին աշխատանքը շահագործելէն մինչեւ բռնապետական կարգեր հաստատելուն՝ մէկ հոգիի կամ փոքրաթիւ անդամներէ բաղկացած խումբերու տիրապետութեան ներքեւ:

Կայ փառքի տենչը՝ փառատենչութիւնը, որ մասամբ կրնայ առնչուած ըլլալ առաջին յատկանիշին, բայց նաեւ ունենալ իր ինքնուրոյն զարգացումը՝ կարեւորութիւն ստանալու, երկրպագութեան արժանանալու ցանկութեան շեշտումով: Իր գրական երեսով ասիկա սեփական ձիրքերու յայտնաբերման ու անոնց գնահատման կրնայ տանիլ, ինչպէս է ըսենք տաղանդաւոր դաշնակահարի մը կամ գեղանկարչի մը պարագան, իսկ ժխտական երեսով՝ կրնայ առաջնորդել ինքզինք ամեն կերպով պարտադրելուն եւ շրջապատի շողոքորթութիւնները ձեռք ձգելուն:

Կայ եւ ինչքի տենչը՝ ընչաքաղցութիւնը, որ նոյնպէս կրնայ կապ ունենալ տիրելու իրքին հետ, նոյնիսկ փառքի որոնումին հետ, սակայն նաեւ իր իւրապատուկ խորացմամբ կը տանի յափշտակութեան, աւագակութեան, հարստութեան անհաշիւ ու անօգուտ կուտակման, օրինախախտումներու եւ այլ յոռի բարքերու: Չեմ գիտեր

թէ որեւէ զբաղման զարձուածք կրնայ ստանալ այս մոլորութիւնը: Ըսելիքս այն է, որ մնայուն յատկանիշերու վերածուած են այս գիծերը, ու մտաւոր ապագային դժուար թէ մարդը այնքան քաղաքակրթութիւն, որ անոնք այլեւս մեզ չմտահոգեն:

Այսինքն՝ ընկերային այն հասարակարգը, որ այդ մոլորութիւններուն վրայ հիմնուած է, այսօր-վաղը անհետանալու որեւէ հաւանականութիւն ցոյց չի տար...

Այս չի նշանակել, ի հարկէ, որ դրախտէն արտաքսուած մարդը հրաժարի հոն վերադառնալու իր երազէն, գլխադիր Մարդ դառնալու իր երկնատուր առաքելութեանէն:

Այլ խօսքով՝ բնութեան բարիքները իր նմաններուն հետ հաւասար իրաւասութեամբ վայելելու իրաւունքէն: Այս մոլորակին վրայ նուազագոյն կարիքները հոգալու հնարաւորութիւնը ունենալու առիթէն:

Իր եւ ընտանիքին գլխուն ամրակերտ ծածկ մը ունենալու տարրական ապահովութենէն:

Իր ու ընտանիքին սնունդը, առողջութիւնը, ուսումը հայթայթել կարենալու միջոցներէն:

Իր իմացական եւ ստեղծագործական ձիրքերը մշակելու կարելիութիւններէն:

Գեղեցիկը վայելելու, հոգին ազնուացնելու եւ իր Աստուածը պաշտելու նոյնպէս տարրական իրաւունքներէն:

Իր ինքնութիւնը գգալու, պահելու եւ մշակելու անհրաժեշտ տարածքէն ու ժամանակէն:

Այո, այս բոլորը ու դեռ աւելին մաս կը կազմեն այն հաւասարութեան, որմէ զրկուած է մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը այսօր:

Այդ «հաւասարութիւն»-ը վայելող ջախջախիչ փո՛քրամասնութիւնը կը գիտակցի՞ արդեօք, թէ որքան ալ անհաւանական թուի ներկայիս, որքան ալ որեւէ փոփոխութիւն շատ հեռու թուի տակաւին, առանց այս կացութեան բարեշրջման, առանց անհաւասարութեան նուազման, ի վերջոյ ի՞ր ալ գոյութիւնը պիտի վտանգուի:

Այդ փոքրամասնութիւնը, որ իր տնտեսական լծակներով բոլորին ու բոլոր ազգութիւններուն կը փորձէ աշխարհի ի՞ր մտապատկերը պարտադրել, միշտ սեփական շահերը նկատի ունենալով, կրնայ գտնուիլ մեծ անակնկալներու առջեւ:

Մտածել այս մասին:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Հորիզոն www.horizonweekly.ca

Linda Kharaboyan Notaire Notary

Ձեր նոտարական և իրաւաբանական հարցերն ու ծրագրերը վստահեցէ մեզի

Vos affaires. À cœur.

Therrien Couture

3111, boul. Saint-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2 t. 450 682.5514 - 855 633.6326 linda.kharaboyan@therriencouture.com therriencouture.com

VIZUALIS optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire

514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO Cristal

(514) 744 4313

Berj Merdjanian

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement

Video - Reproduction

647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3 photocrystal@hotmail.com www.photocrystal.com

Assura Bien inc.

Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN

Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CEL) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com

TAXI MIRABEL
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիք ունի 20 հայ թաքսի վարորդի Միքապէլ շրջակային մէջ: Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

RE/MAX RE/MAX 3000 inc. Agence Immobilière

Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker

**C 514.519.3543
B 514.333.3000**

ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POWDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOUVREMENT SUR ONGLES NATURELS

Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666 krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM™
Mortgage Solutions Inc. License # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

SOSIE DERNERSESSIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830
716 Gordon Baker Road, Unit 204A, Toronto Ontario M2H 3B4
416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com

Նոտար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ ԴՈԿՏՈՐ ՎԻԳԷՆ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ՀՅԴ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ Սփիւոքը Ի Սպաս Միացեալ, Ազատ Ու Անկախ Հայաստանի Կերտումին

20րդ դարու հայ քաղաքական եւ ուղղափարական միտքի հսկաներէն Ռուբէնի «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները» հատորները ոչ միայն յուշագրական պատումն են մեր ազատագրական շարժումին, այլև վերլուծումն են նոյն այդ ազատագրական պայքարի ելեւէջներուն:

Ռուբէն թէ՛ կը նկարագրէ մեր այդ պայքարի դրուագները իբրև ականատես ու մասնակից, եւ թէ՛ վերլուծումը կը կատարէ անոր զանազան դրուագներուն ու քաղաքական արժէքին:

Ռուբէնի գործը ոչ միայն հերոսապատում է, այլ նաեւ քաղաքական վերլուծում: Սակայն հակառակ իր ոչ անպայմանօրէն շքեղ ոճին, Ռուբէնի գործը ներշնչումի աղբիւր հանդիսացաւ մեր գեղարուեստական գրականութեան համար: Իր պատումներէն ներշնչուած են Մալխասի «Զարթօնք» վէպը, Կոստան Զարեանի «Տատրագոմի Հարսը» երկարաշունչ բանաստեղծական գործը, ու մանաւանդ եւ յատկանշականօրէն՝ Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների Կանչը» վէպը, նոյնինքն խորհրդային կարգերուն տակ:

Այս յուշագրական հատորներուն մէջ, Ռուբէն մեզի կը ներկայացնէ Դաշնակցութիւնը իր ամբողջ էութեամբ, հոգեբանութեամբ, բնագոյներով ու բանականութեամբ, թիրուծիչներով ու անվիճելի առաւելութիւններով, որոնք զարմանալիօրէն յար եւ նման են մեր ժողովուրդի նոյն այս յատկանիշներուն: Ինչ որ մեզ կը յանգեցնէ այն ընդունուած փաստին, որ ՀՅԴ Դաշնակցութիւնը հայ ժողովուրդին հարազատ ծնունդն է:

Այս կազմակերպութիւնն էր, որ երբ կը հիմնուէր 1890ին, ճամբայ կ'իլլէր «տաճկահայաստանը», մեր հայրենիքի՝ Օսմանեան բռնատիրութեան տակ ճգնժող հատուածը ազատագրելու առաջադրանքով: Ան ճամբայ կ'իլլէր ոչ միայն հողը ազատագրելու, այլ նաեւ հայ մա'րդը ազատագրելու շահագործման շղթաներէն:

Այդ օրերուն, այսինքն 1894ին մշակուած ու հրապարակուած մեր Ծրագրին մէջ, խօսք չկար Արեւելահայաստանի, կամ՝ Յարական կայսրութեան տիրապետութեան տակ ապրող մեր ժողովուրդին մասին: Բայց Դաշնակցութեան բնագոյնն ու էութեան մաս կը կազմէր համայն հայութեան ծառայելու մղումը, այդ մասին որոշում կայացուած ըլլար կամ ոչ:

Այս բնագոյնի մղումը շուտով ստացաւ իր գաղափարական, գիտակցուած բանաձեւումը նոյնինքն Քրիստափորի կողմէ, երբ ան յստակօրէն կը յայտարարէր, թէ պէտք է պատուել այս կամ այն բռնապետին կողմէ գծուած արուեստական սահմաններով քարտէսները, որովհետեւ ատոնք կ'արհամարհեն ժողովուրդներու արդար իրաւունքները:

Հետեւաբար եւ տրամաբանօրէն, Քրիստափոր «յարատել կռիւ» կը յայտարարէր բոլոր տեսակի բռնապետութիւններուն դէմ, մինչեւ որ մեր ժողովուրդը տիրանայ իր սեփական ու ամբողջական հայրենիքին մէջ ազատ ու անկախ ապրելու իրաւունքին: Անկախ պետականութիւն մը, ուր բարգաւաճելու իր անկապտելի իրաւունքը ունենայ հայ ազատ քաղաքացին. ազատ ու գերծ' ամէն տեսակի բռնութենէ, շահագործումէ ու կաշկանդումէ: Ազատ՝ իր արդար քրտինքին վաստակը վայելելու բնական իրաւունքին մէջ:

Այսօր, հայկական պետականութեան հիմնադրութեան հարիւրամեակի առաջին օրերուն, Դաշնակցութիւնը իր ժողովուրդին կը ներկայանայ բռնապետներու կողմէ գծուած արուեստական քարտէսները պատուելու, հայրենիքէն

ներս արդար կարգեր հաստատելու այս գաղափարական ու վարքագծային ծանր ու միաժամանակ քաղցր լուծով:

Կրկնութեան գնով կը յայտարարենք, որ Դաշնակցութեան համար ծրագրային գերագոյն առաջադրանք ու նպատակ է Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի մը կերտումը:

Այս լուծը, ա՛յս տիպի Հայաստան մը ստեղծելու մեր նպատակը մաս կը մտնէ Դաշնակցութեան էութեան, անոր հոգեկերտուածքին, մտածողութեան ու մանաւանդ՝ անոր քաղաքական ու գաղափարական աշխարհին: Այս լուծը մենք պիտի տանինք ի հեճուկա բոլոր չարախօսներուն, ի հեճուկա բոլոր հաւատներուն եւ մանաւանդ՝ ի հեճուկա բոլոր այն ուժերուն, որոնք իրենց հաշիւները խանգարուած կը տեսնեն մեր ժողովուրդի արդար իրաւունքներու վերատիրացման գաղափարին մէջ:

Դաշնակցութիւնը այս հարցը կը դիտէ ազգային-քաղաքական այն մեծ պատկերին մէջ, որ մեզի կը ներկայանայ Հայաստանի Հանրապետութեամբ եւ Սփիւռքով: Այս մեծ պատկերը իր մէջ կը պարունակէ ուղղափարական արժէքները եւ մանաւանդ՝ ուժի լուրջ աղբիւրներ: Ուժի այս աղբիւրներն են Հայաստանի Հանրապետութիւնը, այսինքն հայութեան պետականութիւնը եւ Սփիւռքը:

Այսօր մեր առջեւ կը դրուի Սփիւռքը վերակազմակերպելու օրակարգը, որովհետեւ ինչպէս աշխարհը յարափոփոխ է, Սփիւռքը ինք եւս միշտ փոփոխութիւններէ կ'անցնի: Այսօրուան Սփիւռքը տարբեր է մինչեւ 1988 թուականը գոյութիւն ունեցող արտաշխարհէն: Մինչեւ այդ թուականը, ոչ Արցախը ազատագրուած էր, ոչ ալ Հայաստանը անկախացած: Մենք Սփիւռքը կը տեսնենք իբրև մէկ մասը ամբողջական հայութեան:

Եւ պէտք է շեշտենք, որ Սփիւռքը, ինչ ալ ըլլան հանգամանքները, ինքնանպատակ չէ: Մենք զայն կը տեսնենք իբրև այն ուժը, որ կոչուած է նեցուկը դառնալու մեր անկախ հայրենիքին: Նեցուկ՝ ամէն իմաստներով. Այսինքն մասնագէտ մարդուժի, տնտեսական, քարոզչական եւ բնակարարար նաեւ, քաղաքական առումներով:

Սակայն որպէսզի Սփիւռքը կարենայ իր դերը լաւ կատարել ու ճիշդ կատարել, անհրաժեշտ է որ ան կարենայ բարձրացնել իր կազմակերպուածութեան մակարդակը եւ որակը:

Տարբեր խօսքով, Սփիւռքը պարտաւոր է նոր որակ բերելու իր կրթական համակարգէն ներս, որպէսզի կարենայ դաստիարակել այն սերունդները, որոնք պատրաստ պիտի ըլլան յանձնառութիւն ստանձնելու իրենց միջավայրին ու մանաւանդ՝ հայրենիքին նկատմամբ:

Մեր բոլոր մարզական, մշակութային, բարեսիրական կամ մինչեւ իսկ հայրենակցական միութիւնները, պարտաւոր են իրենք գրեթե տեսնելու իբրև մէկ մասնիկը ամբողջական հայութեան: Անոնք պարտաւոր են իրենց գերակատարութիւնը պատշաճեցնելու այն որակին, որ իրապէս բարիք ստեղծէ Հայաստանի համար:

Այս իմաստով, յատուկ ու ծանր պարտաւորութեան տակ կը գտնուի Արեւմտեան Ամերիկայի թէ՛ մեր ժողովուրդը եւ թէ՛ մեր կազմակերպութիւնը, Սան Ֆրանսիսքոյէն ու Ֆրեզնոյէն սկսելով ու հասնելով մինչեւ Օրենճ Քաունթի:

Փաստ է, որ այս կէս միլիոնէն շատ աւելի հաշուող հայ համայնքը տակաւին չէ կրցած լուծել իր կրթական համակարգի խնդիրը: Խնդիրը միայն համայնքի թիւին համեմատութեամբ վարժարաններ

ունենալուն չի վերաբերիր. այլ՝ իր ընդհանրութեան մէջ, սերունդը իբրև հայ դաստիարակելու առումով: Տարբեր խօսքով, այս համայնքը պարտաւոր է պատասխանելու այն մեծ հարցումին, թէ ինչպէ՞ս կը պատրաստուի դիմագրաւելու եկող սերունդներու հայեցի դաստիարակութեան խնդիրը: Եւ այս հարցումը մինչեւ այսօր կը մնայ անպատասխան:

Եւ տակաւին, այս համայնքը իր ունեցած տնտեսական հսկայական կարողականութեամբ, ինչքանո՞վ մասնակից է համայնքին թիւին համեմատ հայկական կրթական համակարգի մը անհրաժեշտ յենարանները ստեղծելու ճիգին: Մեր խօսքը բնականաբար չի վերաբերիր անհատ բարերարներուն, կամ ժողովուրդային այն փոքրածիւ խաւին, որոնց կատարած դրական գործին վկաններն են Քալիֆորնիոյ մէջ գործող բոլոր՝ հայկական վարժարանները անխտիր: Խօսքը կը վերաբերի այս բնագաւառէն ներս «սիսթեմիք», համակարգային մտածողութեան, որուն ստեղծումը, դարձեալ, կ'իյնայ ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի կազմակերպութեան ուսերուն:

Արեւմտեան Ամերիկայի հայու-թիւնը ինքն իր մէջ կը պարունակէ հսկայական ուժակազմութիւն մը, շնորհիւ իր այլազանութեան: Դարձեալ՝ մեր պարտականութիւնն է համագործակցելու այս այլազանութեան մէջ, որպէսզի կարենանք առաւելագոյն չափով պեղել ու երեսան հանել այդ ուժը, ու զայն օգտագործել թէ՛ ի նպաստ համայնքի կազմակերպչական որակին եւ թէ՛ մանաւանդ՝ ի նպաստ Հայաստանին, մեր հայրենիքին:

Իսկ մենք, իբրև Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, պիտի գործենք այն վաղուց հաստատուած տրամաբանութեան համաձայն, որ անհրաժեշտ է այս բոլորը համադրել, ու համախմբել, որպէսզի ի վիճակի ըլլանք այս բոլորէն քաղաքական կշիռ ու քաղաքական ուժ ստեղծելու:

Տասնամեակներ առաջ, ՀՅԴ պաշտօնաթերթ «Ազգակ-Շաբաթօրեակ Դրօշակ» խմբագրականներէն մէկը, Սարգիս Զէյնթեանի գրիչով, կը հաստատէր, թէ անհրաժեշտ է «Քալիֆ ժամանակին հետ, կազմակերպուել արդի ժամանակներու ոգիին ու պահանջներուն համաձայն, արդիանալ ու արդիացնել կազմակերպական մեր կառույցներն ու գործելակերպը՝ համահայկական ընդհանրական մեր տեսլականներուն ներշնչումով եւ հայութեան յառաջդիմութիւնը (անհատական թէ՛ հաւաքական գետնի վրայ), անոր կուտակած եւ դեռ կուտակելիք մշակութային ու քաղաքակրթական, կամ նիւթական ու հոգեմտաւոր հարուստ դրամագլուխը՝ վերածել քաղաքական ուժի, քաղաքական որակի, քաղաքական կամքի»:

Ըսինք արդէն, որ Սփիւռքի կազմակերպումը ինքնանպատակ չի կրնար ըլլալ: Մեր բոլորիս գերագոյն նպատակն ու մեր մտածողութեան առանցքը Հայաստանն է: Անոր հզորացումը, բարգաւաճումը:

Այն Հայաստանը, ուր քաղաքացին թէ՛ պաշտպանուած ըլլալ արուեստական կապանքներէն եւ թէ՛ վայելէ այն անհրաժեշտ ազատութիւնը, որպէսզի կարենայ ստեղծագործել, կառուցել ու վայելել իր քրտինքին արդար արդիւնքը: Մէկ խօսքով, այն Հայաստանը, ուր տիրող ոչ թէ մենաշնորհները եւ կամայականութիւնները ըլլան, այլ՝ արդար օրէնքներու ստեղծելիք այն առողջ միջավայրը, ուր քաղաքացին ինքզինք մասնիկը համարէ պետականութեան ու զգայ, թէ իշխանութիւնը կը ձեւաւորուի ըստ իր իսկ կամքին, ու ըստ այն քուէին, որ ինք ունի:

Բոլորս ալ քաջ կը գիտակցինք, որ

Հայաստանի ու հայութեան համար ազգային աղէտի համագործ է արտագաղթը, որ ինքնին արդիւնք է ոչ միայն տնտեսական նեղ պայմաններուն, այլ նաեւ այն մթնոլորտին, ուր հայը իր հայրենիքէն ներս ինքզինք պաշտպանուած չի գգար օրէնքով: Տարբեր խօսքով, քաղաքացին ինքզինք անգոր կը զգայ. ինքզինք խորթացած կը զգայ պետութենէն ու կը դիմէ վերջին յուսահատ քայլին՝ արտագաղթելով:

Դիւրին է արտագաղթի մասին յօդուածներ գրելը, երեւոյթը քննադատելը, այս կամ այն քաղաքական ուժերը քննադատելը (թէկուց արդարացի կերպով): Դիւրին է հարցազրոյցներով կամ մամուլի գանազան միջոցներով այդ հարցը քննարկելը եւ մեղաւորները ամենախիստ բառերով քննադատելը:

Դժուարը սակայն միւսն է. այսինքն, առնել այնպիսի գործնական քայլեր, որոնք կը միտին եթէ ոչ կասեցնելու, այլ գէթ՝ մեղմացնելու այն չարքը, զոր կը կոչենք արտագաղթ:

Ըսինք արդէն, որ տնտեսական մենաշնորհը չարիք է, զոր անհրաժեշտ է արմատախիլ ընել, չէզոքացնել: Տասնամեակներու ընթացքին ձեւաւորուած այս դրութիւնը մէկ որոշումով, կամ չոր ու ցամաք օրէնքով մը կարելի չէ փոխել: Բայց կարելի՛ է բարեշրջման գործընթացը սկսիլ եւ ձեզի կրնան վստահեցնել, որ Դաշնակցութիւնը յանձնառու է այս բարեշրջման գործընթացին նկատմամբ:

Մենք կը զգանք պարտաւորութիւնը կառավարութեան ներս մեր գործակիցները համոզելու, որ մենաշնորհներու նկատմամբ անհրաժեշտ է բազմակողմանի եւ միաժամանակ վճռական կեցուածք որդեգրել: Մեր կարծիքով, եթէ այս քաղաքական կամքը չցուցաբերուի, արտաքին ներգրումները ոչ միայն հիմք չեն ստեղծիր տնտեսական դրական տեղաշարժի համար, այլև պարզապէս կրնան ուժեղացնել նոյնինքն այս մենաշնորհային համակարգը:

Իսկ մենք հետամուտ ենք հիմնական լուծումներու, ուր գոյութիւն չեն կրնար ունենալ մենաշնորհները: Մենաշնորհներէ ազատագրուած տնտեսական համակարգի մը մէջ է միայն, որ ձեռններէց քաղաքացին կրնայ ազատօրէն ստեղծագործել, բարգաւաճիլ ու իր հետ բարգաւաճեցնել հայրենիքը:

Կ'ուզենք ճիշդ հասկցուիլ: Մենաշնորհներու կապակցութեամբ մեր տրամադրութիւնները ինչքան վճռական են, միաժամանակ սակայն հեռու ենք թշնամական կեցուածք որդեգրելէ: Աւելի քան 100 տարի առաջ ալ կային հայ «օլիգարխներ» եւ Դաշնակցութիւնը այդ իրականութեան դէմ յանդիման դառնուած էր: Կարդացէ՛ք նոյն Ռուբէնի յուշերու Բ. հատորի 138րդ էջէն սկսող գիտարկումները եւ պիտի համոզուիք, որ սեւ ու ճերմակ չէր կացութիւնը: Այսօր եւս, շատ տարբեր չէ կացութիւնը:

Այսօր բնականաբար փոխուած են պայմանները, սակայն մեր պատմական փորձառութիւնը մեզի կը թելադրէ ոչ թէ թշնամական, այլ վճռական կեցուածքով մօտենալ այս խնդրին. ոչ թէ բախումային, այլ՝ քաղաքական ուժեղ կամք ցուցաբերելով հասկցնել բոլորին, որ տնտեսական մենաշնորհները միայն չարիք են եւ չեն նպաստեր երկրի ներքին ուժեղացման:

Դիւրին լուծումներ չկան: Բայց ամէն անգամ որ Հայաստանն ու հայութեան շահերը խնդրոյ առարկայ եղած են, Դաշնակցութիւնը ոչ մէկ ատեն խուսափած է այդ պատասխանատուութենէն:

Մենք յանձնառու կը մնանք մեր կողմէ առաջ մղուած այն պայմաններ

ՄԱՀԱՋԴ

Տիկ. Լուսրադ Մուրատեան-Գազանեան, Տ. Տ. Կարօ, Գարին Գազանեան, դստեր՝ Լիւսի, Մէրի, Տ. եւ Տ. Պարոյր, Արտա Գազանեան զւկ.՝ Ժողէֆ, Լիւսիա, Լիանա Տ. եւ Տ. Ղուկաս Տ. Ղուկասեան, Գարէն Գազանեան, զւկ.՝ Արսէն, Արլին, նաեւ համայն, Գազանեան, Մուրատեան, Մաքսուտեան, Գույումեան, Մանանեան, Մակարեան, եւ Տէր Ղուկասեան ընտանիք խոր ցառով կը գուժեն մահը իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝ **ՅՈՎՍԷՓ ՍՐԿ. ԳԱԶԱՆԶԵԱՆԻ** (Ծնած 1931-ին, Լիբանան) որ պատահեցաւ, Ուրբաթ, 2 Փետրուար 2018-ին: Եկեղեցւոյ կարգը տեղի ունեցաւ երկուշաբթի, 5 Փետրուար 2018-ի միջօրէի ժամը 12:00-ին, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ որմէ ետք մարմինը ամփոփուեցաւ St. Laurent գերեզմանատուն:

ԳՈՅԺ

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերազնորհ Տ. Բարգէն Արք. Զարեան, Թեմի Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը, հոգեւորականաց դասն ու Հոգաբարձական կազմերը, Ազգային Երեսփոխաններն ու Պատգամաւորները, խորագգաց ցառակցութիւն կը յայտնեն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ լուսահոգի **ՅԱԿՈՒ ԵՍՓՈՒՅԵԱՆԻ** այրիին եւ զաւակներուն մահուան քօթին առիթով:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:
Դիւան Ազգային Առաջնորդարանի

ՄԱՀԱՋԴ

Տիկին Սօնա Եսփոնեան եւ զաւակը՝ Հայկ, Տէր եւ Տիկին Վարանդ եւ Վանա Եսփոնեան եւ զաւակը՝ Արմէն, Տէր եւ Տիկին Մկօ եւ Հուրի Եսփոնեան եւ զաւակները՝ Լոռի եւ Ռաֆֆի, Տէր եւ Տիկին Հրայր եւ Լալէ Եսփոնեան եւ զաւակը՝ Սեւան, Տէր եւ Տիկին Տիգրան եւ Անգին Գալայեանեան, Տիգրանուհի, Դշուկ եւ Յակոբ Գալայեանեան, Տէր եւ Տիկին Յակոբ եւ Մարալ Նազարեան եւ զաւակը՝ Նարեկ, Տիկին Շաֆէ Շիմշիրեան եւ ընտանիք, Կարօ եւ Անի Սինանեաններ, Քէշէկեան, Արանեան եւ Գազանեան ընտանիքներ, Մալխասեան եւ Մոսիկեան ընտանիքներ, Տէր Պետրոսեան եւ Մարկոսեան ընտանիքներ, եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, հորեղբոր եւ հարազատին՝ **ՅԱԿՈՒ ԵՍՓՈՒՅԵԱՆԻ** (Ծնեալ Պէրոյր, 1945-ին) մահը, որ պատահեցաւ շաբաթ, 3 Փետրուար 2018-ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ երեքշաբթի 6 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Անթիլիասի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրան-Էլ-Շըպպէի Ազգ. Գերեզմանատունը: Կատարուեցաւ ազգային թաղում: Փափաքողները իրենց նուիրատութիւնները կրնան կատարել «La Fondation de l'École Arménienne Sourp Hagop» ֆոնտ-ին:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

«Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը ցառակցութիւն կը յայտնեն Գարէն, Պարոյր եւ Կարօ Գազանեաններուն եւ իրենց բոլոր ընտանեկան պարագաներուն, իրենց հօր՝ **ՅՈՎՍԷՓ ԳԱԶԱՆԶԵԱՆԻ** մահուան տխուր առիթով:
ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան Ընդհանուր Վարիչ Մարմինը ցառակցութիւն կը յայտնէ ընկ. Յարութ Դաւիթեանին, իր հօր՝ **ԽԱԶԻԿ ԳԱԻԻԹԵԱՆԻ** մահուան տխուր առիթով:



Այցելեցեք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակօրեայ դպրոցի կայքէջը՝
www.sourphagop.org

Job Opportunity / Receptionist

We manufacture various kinds of industrial electric heaters. We are looking for a Receptionist to manage our front desk on a daily basis and to perform a variety of administrative and clerical tasks.

A pleasant personality is very important, since this is also a customer service role. Multitasking and the ability to work with various units within the organization, (production staff, engineers/designers, sales managers, customer service administrators, etc.) is essential for this position.



Submit CV's to hermig@bucan.com

ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ Ալին Պեքերճեան

Achat	Առուստի	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատրում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուստրին	Marriage
Procuratoin	Փոխանորդագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Շաաայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Գայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.



3400 rue Nadon
Montréal, QC
H4J 1P5
(514) 549-0416
(514) 332-1373 poste 6

Թափուր աշխատատեղ

Սուրբ Յակոբ եկեղեցւոյ «Դրօ եւ Աննա Փիլիկեան» Շաբաթօրեայ վարժարանը կը յայտարարէ, թէ կարիքը ունի հետեւեալ առարկաներու պատմութեան, հայոց լեզուի/հայ գրակ. եւ արուեստի ուսուցիչներու.

ՊԱՇՏՈՆ
*Ուսուցիչ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
*Առարկայի դասաւանդում
*Առարկայական ծրագրի կազմութիւն եւ իրականացում

ԿՐ ՊԱՀԱՆՁՈՒԻ
*Մասնագիտութեան համապատասխան բարձրագոյն կրթութիւն
*Անուագն հինգ տարուան ուսուցչական փորձառութիւն
*Առարկայի դասաւանդման եւ զնահատման մեթոտաբանութեան իմացութիւն
*Համակարգիչի իմացութիւն (word, excell, powerpoint)

ՅԱԻԵԼԵԱԼ ՀՄՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ
*Համագործակցաբար աշխատելու կարողութիւն
*Ստեղծագործական եւ վերլուծական մտածողութիւն, ինքնակառավարման կարողութիւն
*Աշխատանքի որակի համար առաւելագոյն պատասխանատուութիւն եւ հոգատար վերաբերմունք աշակերտներուն հանդէպ
*Իրաբանչիւր տարիքային խումբի երեխաներու հետ աշխատելու համար համապատասխան անհրաժեշտ հմտութիւններ
*Մասնագիտական փորձառութիւնը շարունակաբար կատարելագործելու պատրաստակամութիւն

Հետաքրքրուողներէն կը խնդրուի դիմել հետեւեալ ե-հասցէին direction@ecoledusamedisourphagop.com կցելով ինքնակենսագրութիւն (CV) եւ համաճարտ ուղեկցող նամակ

horizon
HORIZON
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription Canada
2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Ehramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylva@horizonweekly.ca
Courier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Վարիչ Խմբագիր՝
Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու՝
Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր՝
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-համեան, Թինա Սիլվահեան
Չեաատրում՝ Նէմսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թիթիգեան

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայր Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնթաշ

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada



ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ



ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) - Աշխատանքի մեջ գործընկերներդ ումանք մտերիմ բարեկամներու պիտի վերածուին: Ուր կայ յարգանք եւ սեր, հոն կը ծաղկին իսկական բարեկամությունը: Տեր կանգնիր անոնց, ձեր բարեկամությունը կրնա երկար տարիներ տևել:

ՅՈՒՆ (21 Ապրիլին 21 Մայիս) - Այս շաբաթ անկույտնություն կը սկսիս գործի, կասկածներու շարան մը կը խանգարե տրամադրությունը, զգոյշ եղիր, որ այս մեկը երկար չտևի, շուտով փորձե շրջանցել բոլոր կասկածներդ, որպեսզի կարենաս ինքնավստահորեն շարունակել երթոյ:

ԵՐԿՈՒՐՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս) - Կարելոր որոշում մը առնելու վրայ ես, երկար առնել ի վեր ասոր մասին կը մտածես, այլևս ձգձգելու եւ երկմտելու առիթ չունիս: Վերջնական որոշումդ ա՛ռ եւ ստանձնե պատասխանատուութիւնը որոշումիդ: Մի՛ ընկրկիր:

ԽԵՅՁԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս) - Դեռու մնացեք այն մարդոցմէ, որոնք խոստումներով կը շլացնեն ձեզ: Անոնք բոլորը կեղծ խոստումներ են: Փորձե՛ ոտքերդ ամուր պահել իսկական գետնի վրայ եւ մի՛ թափառիր երազային աշխարհները. ամեն իսօսքի ալ մի՛ հաւատար:

ԱՌԻԾ (24 Յունիսին 23 Օգոստոս) - Դժուարություններով կը սկսի այս շաբաթը: Վեճն ու խզումը հարցերու լուծումի ձեւեր չեն: Փորձե՛ երկխոսութեամբ լուծել հարցերդ եւ հասկացողութեամբ վերաբերիլ շուրջիններուդ հետ: Յարձակողական կեցուածքը կը բարդացնէ վիճակը:

ԿՈՅԱ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր) - Խաղաղ մնալու համար վերջերս որոշած ես բնա չջղայնաւալ: Լաւագոյն որոշումն է այս: Կեցցե՛ս: Փորձե՛ կառչիլ այս որոշումիդ եւ անոր համեմատ վարուիլ: Խաղաղ եւ հանդարտ մնալու միակ միջոցն է այս: Խնայե՛ նաեւ առողջութիւնդ:

ԿԾԻՈՔ (24 Սեպտեմբերին 23 Յոկտեմբեր) - Աշխատանքի մեջ ազնիւ վերաբերումը կը գոհացնէ բոլորը: Դեռու մնացեք ինքնագովութենէ եւ անելորդ հպարտութենէ, յարգեցեք նաեւ ուրիշներուն կարծիքը: Միշտ չէ, որ իրատու կը ձեզի հետ է, երբեմն ձեր պնդումներն ալ անհիմն են:

ԿՈՒԾ (24 Յոկտեմբերին 23 Նոյեմբեր) - Ե՛լ ընտանեկան յարկէն ներս, ե՛լ աշխատանքիդ մեջ հարցեր եւ վեճեր կ'ունենաք այս շաբաթ, որոնք բոլորն ալ ապարդիւն ու անիմաստ են: Աւելի խելամիտ եղէք եւ հեռու մնացեք սման վիճաբանություններէ:

ԱՐԵՆԱԿՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր) - Շատախոսութեամբ մը բռնուած ես վերջերս, սկսած ես խօսիլ նոյնիսկ անհեթեթ ու անիմաստ երեւոյթներու մասին: Երկար շունչ մը քաշե՛ եւ փորձե՛ զսպել շատախոսութեան ախորժակդ, որովհետեւ երբեմն անզգալար գաղտնիքներ կրնաս դուրս տալ:

ԱՅԾԵՂՁԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար) - Փոխադարձ հասկացողութիւն պետք է ցուցաբերել անոնց հանդէպ, որոնք միշտ կողքիդ եղած են: Կարելի չէ շահագործել սման մարդոց բարեացակամութիւնը: Դուն ես պարտաւոր ես բարեհաճութեամբ վարուիլ:

ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարին 19 Փետրուար) - Նոր պաշտօններու կը դիմես աստ ու անդ, դժբախտաբար ոչ մէկը արդիւնք կու տայ: Ժամանակն է քու վիճակդ վերատեսութեան ենթարկելու եւ նոր ծրագիր մը մշակելու: Մի վախնար նորություններէն:

ՁՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ) - Ափսո՛ս որ վերջերս անտարբեր ես նոյնիսկ կարելոր հարցերու գծով, յուսահատութենէ կը տառապիս: Ծիշո՛ր չէ այս ընթացքդ, պետք է լարես ուժերդ եւ պատասխանատու ըլլաս դիմագրաւած հարցերուդ: Թուլութիւնը չի լուծեր հարցերդ:

ՀՈՐԻՋՈՒՆ
Առ ի գնահատանք
Մարտի 01/Մանան 400

Ս. ԱՍՏՈՒՎԱԾՄԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ԹՈՐՈՒԹՕ

Անի Թորքման-Տամաթ-ի յիշատակին
Յակոբ եւ Սեղա Թաշեան 100
Թաքեան Յակոբի 40-քին
Վաչէ եւ Ջեփիւ Պերպէրեան 20
Հապիպի եւ Ռոճայեան Արա-ի Հոգիներուն
Տիկ. Լուսին Ռոճայեան 50
Հաննիկեան Մարի-ի 9-րդ տարելիցին
Տիկ. Ալիս Թաշեան 30
Տիար Սարգիս Հաննիկեան 35
Սարգիսեան Նշանի 40-քին
Մարիամ Սարգիսեան 160
Սարգիսեան Արա-ի եւ Էմբրզա-ի Հոգիներուն
Տիկ. Նուարդ Փայլեան 20
Տիար Աւետիս Յովհաննէսեան 30
Ջոքեան Թաքուհի-ի 40-քին
Յոլակ եւ Սեւան Աթանոսեան 50
Փիլաճեան Վարդանի եւ Մարիամի եւ Համայն
Փիլաճեան եւ Ատանաբեան գերդաստանի ննջեցեալներու Հոգիներուն
Սեղա Փիլաճեան 50

Քենեամին եւ Հուրի Փիլաճեան 70
Թալին Վարդապետեան 20
Սէմիրեան Գէորգի 40-քին
Նագօ Սէմիրեան եւ ընտանիք 20
Միլլեդեան Վերժուհի-ի Հոգույն
Յարութ եւ Սառա Միլլեդեան 20
Այվազեան Ներսէսի, Անիթա-ի, Սեղա-ի
Տալգոճեան Անդրանիկի, Ռաշիկի եւ Մարիամի Հոգիներուն
Յակոբ եւ Տամարի Այվազեան 20
Պատայեան Ռոպէլթ, Ալեքսանեան Ժամինի եւ Արմինի Հոգիներուն
Տիկ. Մարի Պատայեան 40
Սարուխանեան ՕՖֆիլի, Միքմանի, Քանազեան Սարգիսի,
Վիլլիթի-ի եւ Համայն Սարուխանեան եւ Քանազեան գերդաստանի ննջեցեալներու Հոգիներուն
Վարդան եւ Այտա Ֆրանգեան 50
Ջեղեցեան Մկրտիչի եւ Համայն Ջեղեցեան գերդաստանի ննջեցեալ Նարայր եւ Հեղինէ Ջեղեցեան 20
Հրեշտակեան Յակոբի 9-րդ տարելիցին
Մարալ Մելքոնեան 20
Փայլապետ Հնազանդի, Երզնկացեան Կարպիսի,
Թաֆանեան Բարսեղի եւ Համայն Փայլապետ, Երզնկացեան եւ Թաֆանեան գերդաստանի ննջեցեալներու Հոգիներուն
Տիկ. Ասողիկ Թաֆանեան 50
Աւագեան Միհրանի 5-րդ տարելիցին
Տիկ. Վեհանուշ Աւագեան 50
Պոյաճեան Մարիամի 23-րդ տարելիցին,
Պոյաճեան Մարաքանի-ի, Յակոբի, Ատուշանի եւ Համայն Պոյաճեան, Երամեան եւ Թէրզեան գերդաստանի ննջեցեալներու Հոգիներուն
Օրդ. Յամիկ Պոյաճեան 50

ՏԵՎԷՄԵԱՆ ԱՎՈ-Ի 8-րդ տարելիցին,

Մեղրեան ճամայի 7-րդ տարելիցին,
Կարապետեան Աննա-ի, Արշակի, Վերատուրի, Նարկիզի,
Վարդանեան Հայկի, Ռէքէկա-ի եւ Հնայեակի Հոգիներուն
Տոբթ. Սամի եւ Սեղա Կարապետեան 250
Ջախատուրեան Լուսինի 40-քին
Վրէժ եւ Նուշիկ Միլլեդեան 50
Շահինեան Գրիգորի եւ Ռազմուհի-ի Հոգիներուն
Յարութիւն եւ ալիս Շիթիկեան 100
Երուանդ եւ Նայիրի Շահինեան 100
Ջալէն եւ Սուրի Պատիկեան 50
Գույումճեան Յակոբի Ա. տարելիցին
Սեղա Գույումճեան 100
Մէնէշեան Ալիսի 40-քին
Սիմոն եւ Մակի Տաղլեան 50
Յարութ եւ Սիրվա Ղազարեան 20
Ազրլեան Անդրանիկի եւ Արշալոյսի Հոգիներուն
Գուրգէն եւ Հեմմինէ Ալթունեան 30
Օսմանեան Սարգիսի Հոգույն
Վերա Օսմանեան 40
Տոնաթոսեան Արմէնի, Վարդուհի-ի, Եղիաթէթի,
Շաքէ-ի, Անահիտի եւ Սուրի-ի Հոգիներուն
Տիար Գրիգոր Տոնաթոսեան 200
Մուշեան եւ Ռաչատուրեան գերդաստանի ննջեցեալներու Հոգիներուն
Տիկ. Ասողիկ Թաֆանեան 50
Ամիրխանեան Սեղա-ի, Սորոմոնեան Սիրվարդի Հոգիներուն
Ռաֆֆի եւ Նայիրի Ռաշիկեան 40
Այվազեան Վարդանի, Ռաչատուրեան Ռաշիկի եւ
Լուսինի Հոգիներուն
Տիկ. Էմմատ Այվազեան 20
Քարկոցեան Վարդանի, Մելքոնի, Մարիամի,

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԿԱՆՍՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Իւզակին
Փարգլին Պատմանեան 50
Արաքի Ջորայեան 25
Վազգէն Տէր Գալուստեան 100
Րաֆֆի Քէօսէեան 25
Սերբ Տիկ 200
Սարգիս Գույումճեան 50
Վաչք Կոստանեանի Ջորճնէքի կընճարութեան առթիւ
Արթուր, Վանիկ Գալուստեան 100
Սուսի, Թամար Կոստանեան 100
Ուխտի կատարման առթիւ
Սիրարպի Պողոսեան 20
Մեծարդ, Ալիս Ճիլունեաններու,
Վահան, Տիգրանուհի
Տէր Պետրոսեաններու Հոգուց, նաեւ Ճիլունեան,
Էջմէքեան-Հաղուհի, Տէր Պետրոսեան,
Կիւրիւնեան գերդաստանաց ննջեցեալ
Ժան, Յամիկ Ճիլունեան 100

ՎԻԳԷՆ... Սկիզբը էջ 8

րուն, որոնք մաս կը կազմեն «քօալիսիոն» կառավարութեան համար ստորագրուած համաձայնագրին: Հոն, մեր առաջադրած կէտերը կը մնան կարմիր գիծ, որոնցմէ ետ դարձ չենք ընդունիր:

Յառաջիկայ Ապրիլին, Հայաստանը պիտի սկսի կառավարուիլ վարչապետական-խորհրդարանական դրութեամբ: Այս մէկը կրնայ նոր ազդանշան մը հանդիսանալ, որ մենք աւելիով թափ տանք բարեկարգումներու նկատմամբ քաղաքական կամք ստեղծելու մեր ճիգերուն:

Բոլորիդ ծանօթ պէտք է ըլլայ, սակայն կրկնութեան գնով դարձեալ բռնա. անցնող Սեպտեմբերի սկիզբները, երեւանի մէջ գումարուեցաւ ՀՅԴ Բիւրոյի եւ Գերագոյն մարմինի միացեալ նիստ, որուն ներկայ էին նաեւ դաշնակցական նախարարները եւ մարզպետները: Հոն, մեր պետական պաշտօնատարները զեկուցեցին իրենց բնագաւառներու աշխատանքներուն մասին: Ժողովը քննարկեց այս բոլորը եւ եզրակացուցինք, որ աշխատանքներու ընթացքէն, ուղղութիւնէն գոճ ենք, սակայն ոչ՝ արդիւնքներէն: Եւ ասիկա ըսինք՝ հրապարակաւ, որովհետեւ Դաշնակցութիւնը ինքզինք հաշուետու կը զգայ ժողովուրդին:

Յառաջիկայ տարի նաեւ, 100ամեակն է մեր պետականութեան: Այն պետականութեան, որուն ստեղծման մէջ բանալի դեր խաղցաւ Դաշնակցութիւնը: Շատեր, տակաւին մինչեւ այսօր, կը փորձեն նսնձացնել Դաշնակցութեան դերակատարութիւնը 1918ի այդ անկիւնադարձին մէջ: Ուրիշներ պիտի փորձեն այս հարիւրամեակը պարպել իր քաղաքական եւ գաղափարական բովանդակութիւնէն, ու զայն վերածել լոկ ծիսակատարութեան, հրավառութեան, կամ «չօ»ի:

Բայց մեզի համար, 1918ը ոչ միայն հայկական նորագոյն պետականութեան հիմնադրութեան, այլ Հայաստանը միացեալ տեսնելու, ամբողջական տեսնելու գաղափարին խորհրդանիշն է: Այս առիթով, ՀՅԴ Բիւրոն մշակած է 100ամեակի նշումի յատուկ ծրագիր մը, որուն հիմնական նպատակն է գօտեպնդել պետականութեան նկատմամբ մեր ազգային հաւաքական գիտակցութիւնը, համախմբել մեր ժողովուրդին ուժն ու կարողութիւնները հայրենիքին շուրջ: Չկայ ասկէ աւելի մեծ արժէք մեզի համար, որովհետեւ վերջին հաշուով, ՀՅ Դաշնակցութեան ռազմավարական նպատակն է ստեղծել Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստան մը: Ու մեր բոլոր ճիգերը պիտի ուղղենք ա՛յս նպատակին: Այս պատճառով ալ, բոլոր դաշնակցականներէն, ինչու չէ նաեւ՝ բոլոր հայորդիներէն կ'ակնկալենք ամբողջական նուիրում:

Անցնող Ապրիլեան պատերազմի օրերուն, մենք բոլորս ականատես եղանք, թէ ինչպէս 90ական թուականներու ազատամարտիկները, անսալով ՀՅ Դաշնակցութեան կողին, մէկ մարդու պէս ոտքի ելան ու մեկնեցան ճակատ: Լրագրող մը, տեսնելով տարեց ազատամարտիկ մը, որ կամաւոր ճակատ կը մեկնէր, անոր հարցուց, թէ այս տարիքիդ դուն ի՞նչ պիտի ընես հոն, ինչպէ՛ս պիտի կարենաս կուրծիլ: Ազատամարտիկը անայլալ պատասխանեց. «Ես կ'երթամ ճակատ, մեր 20 տարեկան զինուորին կողքին ըլլալու. ոչ միայն կողքին ըլլալու, այլ նաեւ անոր գիմացը կանգնելու, որպէսզի եթէ թշնամիին գնդակը գայ, ինձի՛ դպնայ ու ոչ թէ իրեն»:

Հայաստանն ու հայութիւնը այսօր կը դիմագրաւեն բազում խնդիրներ:

Անդրադարձանք Սփիւռքի հարցերուն, անոնց գէթ մէկ մասին: Անդրադարձանք նաեւ հայրենիքէն արտագաղթի ու մենաշնորհներու խնդրին:

Այս բոլոր հարցերը լուծելու, կամ իրենց լուծման ընթացքին մէջ դնելու ուղին Դաշնակցութիւնը կը տեսնէ ուժերու համախմբումին մէջ, ուժերու գումարումին մէջ:

Դաշնակցութիւնը կը գիտակցի այս բոլոր հարցերու լրջութեան եւ լծուած է գանոնք դիմագրաւելու, գանոնք լուծելու գծուարին աշխատանքին: Թէ՛ մեր ճիգերուն արդիւնքները ի՛նչ կրնան ըլլալ, ատիկա պատմութիւնը պիտի վճռէ: Մէկ բան սակայն յստակ է, որ մենք մեր յանձնառութեանց մէջ կը մնանք վճռակամ:

Որպէսզի մեր վճռակամութիւնը տայ իր առաւելագոյնը, մենք եւս, իբրեւ Դաշնակցութիւն, կարիքը ունինք մեր ուժերու առաւելագոյն լարումին: Դժուար բան է այս փոթորկոտ ու տագնապներով լեցուն աշխարհին մէջ դաշնակցական ըլլալը:

Մենք ընտրած ենք գործելու եւ ոչ թէ անիծելու ուղին: Մենք ընտրած ենք քրտնաջան աշխատանքի եւ ոչ թէ աժան ամբոխավարութեան ուղին:

Դաշնակցական ըլլալը կիսաժամ (փարթ թայմ) աշխատանքի չի նմանիր. դաշնակցական ըլլալը մեր սրտին ուզած պահուն աշխատել, չուզած պահուն մէկդի քաշուիլ չի նշանակիր: Դաշնակցական ըլլալը որոշումներուն նկատմամբ կամայական վերաբերում չի նշանակիր, որ եթէ այս որոշումը հաւնիրք՝ կ'աշխատինք, չենք հաւնիր՝ չենք աշխատիր: Այս չենք մենք:

Այս վճռակամութիւնը աւելիով կ'ամրապնդուի, երբ իւրաքանչիւր դաշնակցական ինք եւս գիտակցի այս հիմնական օրակարգերու լրջութեան, որովհետեւ ամէն ինչ կ'առնուի Հայաստանին: Իսկ Հայաստանը «թուրիզմ» երկիր չէ, Գառնի-Գեղարդ չէ, կերուխուսի սեղաններ կամ Տաթեւի ճոպանուղի կամ տեսարժան վայր չէ: Հայաստանը ապրող հայրենիք է, կենսունակ ժողովուրդ է, իտէալ հասարակութեան մը ենթադրած բոլոր բարիքներուն արժանի ժողովուրդ է: Բայց մանաւանդ՝ Հայաստանը այն հայրենիքն է, որուն սահմանները, չմոռնանք, գծուած են զանազան բռնատէրերու կողմէ:

Դաշնակցութիւնը կը ձգտի Հայաստանը իր այսօրուան արուեստական սահմաններէն դուրս բերել ու զայն հայուն միացեալ հայրենիքին վերածել: Ատի ընկելու համար, զայն միջնաբերդի նման ուժեղ ու անառիկ դարձնելը կը մնայ մեր յանձնառութիւնը:

Միրելի հայրենակիցներ, կոչ կ'ուղղեմ ձեզի, յանուն մեր բոլոր շարքերուն ու մարմիններուն, որ միանաք մեզի, լեցուիք այն հաւատքով, որ մեզ կ'առաջնորդէ: Միանաք մեզի, որպէսզի բոլորիս ուժերու գումարումով կարենանք իրականացնել Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստան ստեղծելու մեր նպատակը:

Լուս Անճելրս.
14 Յունուար 2018



TRACTION INTÉGRALE INTELLIGENTE SANS FRAIS*

SUR LES MODÈLES SÉLECTIONNÉS
(UNE VALEUR MAXIMALE DE 2 200 \$)

à l'achat au comptant ou au financement à l'achat à un taux standard par l'entremise de NCF.

FAITES VITE!
SE TERMINE LE 28 FÉVRIER.

ROGUE MANIA



Rogue SL illustré



ROGUE

VUS #1 AU QUÉBEC EN 2017

LOCATION À PARTIR DE **257 \$** PAR MOIS,
AVEC COMPTANT INITIAL DE 2 495 \$.

C'EST COMME PAYER **59 \$** /SEM. PENDANT **39** MOIS | SUR LE ROGUE S 2018 À TRACTION AVANT

OU

OBTENEZ LA
**TRACTION INTÉGRALE INTELLIGENTE
SANS FRAIS*** SUR LES MODÈLES SÉLECTIONNÉS.
(UNE VALEUR MAXIMALE DE 2 200 \$.)

UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**,
AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**



Qashqai SL Platine illustré

QASHQAI



VUS SOUS-COMPACT DE L'ANNÉE



VUS COMPACT

LOCATION À PARTIR DE **239 \$** PAR MOIS,
AVEC COMPTANT INITIAL DE 2 295 \$.

C'EST COMME PAYER **55 \$** /SEM. PENDANT **39** MOIS
— SUR LE QASHQAI S 2018 À BOÎTE MANUELLE —

OU

OBTENEZ LA
**TRACTION INTÉGRALE INTELLIGENTE
SANS FRAIS**
SUR LES QASHQAI 2017.
(UNE VALEUR MAXIMALE DE 2 200 \$.)

UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**,
AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**

*Des conditions s'appliquent. Taxes en sus. Offre d'une durée limitée et applicable uniquement sur les modèles sélectionnés et sujettes à changements ou annulation sans préavis. Visitez Nissan Gabriel Jean-Talon ou Nissan Gabriel Anjou pour les détails.

NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8
514 509-7777 | nissangabrieljeantalon.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7
514 324-7777 | nissangabrielanjou.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

IN LOVING MEMORY OF
HOVSEP KAZANDJIAN
January 23rd 1931 - February 2nd 2018

